01.07.2019 – 30.09.2019

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայ գրականության պատմության ադրբեջանական կեղծարարությունների հերքումը» ծրագրի կատարված աշխատանքների վերաբերյալ

Աշխատանքային խումբը ձեռնամուխ լինելով ծրագրի իրականացմանը, նախ կազմել է ադրբեջանական աղվանագիտության մեջ «Հայոց արևելյան կողմերի» անվանվող երկերի մասին եղած հրատարակությունների մատենագիտությունը, որի հիման վրա էլ կատարվել են հաջորդող մնացյալ աշխատանքները:

Ի ծանոթություն այս հարցով զբաղվողների, սույն մատենագիտությունը դրվում է կատարված կոլեկտիվ աշխատանքի վերջում:

Ամփոփիչ այս եռամսյակում ավարտական փուլի են հասցվել մեկտարյա ուսումնասիրությունները և կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Շարադրվել է հարցի պատմությունը, թե երբվանից և ինչ նկատառումներով աղվանագիտության շրջանակում փորձեր արվեցին դիտարկել հայ միջնադարյան գրականության մի կարևոր հատվածը:
2. Ինչպիսի հարցադրումներ են առաջ քաշվում այս խնդրի վերաբերյալ խորհրդային և հետխորհրդային շրջանի ադրբեջանական գիտության մեջ:
3. Վեր է հանվում հարցի աստիճանական քաղաքականացումը Արցախյան հարցի խորհրդային շրջանի արծարծումից մինչև Արցախյան շարժումը:

Կատարված աշխատանքն իր ամբողջության մեջ ունի հետևյալ կառուցվածքը:

Ցույց են տրվում միտումնավոր այն փոփոխությունները, կրճատումները և աղ-ճատումները, բնագրային տարբեր շերտերը իրար խառնելը, որոնք կատարվել են Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» և մի շարք այլ պատմագիրների երկերի, ինչպես նաև վարքագրական հուշարձանների դեպքում:

Արցախը, պատմական Գանձակը և հայ միջնադարյան պատմագրության մեջ «Հայոց Արևելյան կողմանք» բնորոշմամբ հայտնի տարածքները որպես ադրբեջանական ներկայացնելը ադրբեջանական պատմագիտության և բանասիրության մեջ խորհրդային շրջանից սկսեց ուղեկցվել աղվանական տեսությամբ, որպես թե պատմական Աղվանքը ոչ թե միայն աշխարհագրական

տարածք է եղել տեղանվանական հասկացությամբ, այլև ունեցել է էթնիկական արժեք իբրև աղվանական ժողովրդին տրված անվանում:

Ըստ այսմ «Աղվանք» հասկացությունից «ծնվեց» աղվանական մշակույթը, գրականությունը և եկեղեցին: Ադրբեջանի կողմից հայ միջնադարյան քրիստոնեական մշակույթի և գրականության յուրացումը սկսվեց իրականացվել որպես թե նրանց նախնիների՝ աղվանների ստեղծած մշակույթով:

Նման կեղծարարությունները կենսական անհրաժեշտություն էին ադրբեջանական պատմագիտության համար, որպես հարակից հիմնավորումներ պատմական կեղծիքների համար:

Պատմությունը և գրականությունը քանի որ իրար զուգահեռ են ընթանում, ուստի հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հարցերի կեղծումը ինքնաբերաբար հանգեցնելու էր նաև հին և միջնադարյան շրջանի գրականության պատմության նենգափոխման փորձերին, քանի որ պատմական փաստերի զգալի մասը հիմնված է միջնադարյան պատմագրության և ընդհանրապես մատենագրական սկզբնաղբյուրների վրա:

Ադրբեջանական պատմագիտության մեջ աղվանականացման առաջին համակողմանի փորձը կատարվեց Զիա Բունիաթովի «Азербайджан в VII – IX вв.» (Բաքու, 1965 թ.) գրքում: Այստեղ առաջ քաշված տեսական դրույթները հիմնավորելու համար անհրաժեշտ էր ստեղծել աղվանական գրականություն, որը աշխարհագրականորեն ընդգրկում էր Հայոց Արևելյան կողմերը և Աղվանից թագավորությունը: Ըստ այսմ պետք էր տեսական նախահիմքեր ստեղծվեին Դավթակ Քերթողի, Մովսես Կաղանկատվացու, Մխիթար Գոշի. Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Վարդան Արևելցու, որպես թե աղվանական գրականության հեղինակները լինելը փաստելու համար:

Նման դրույթը հիմնավորելու համար որպես տեսական ընդհանուր (ունիվերսալ) տեսակետ առաջ քաշվեց այն գաղափարը, որ այս հեղինակների մի մասի ստեղծագործությունները գրվել են աղվաներեն և ապա դրանք հայերեն են թարգմանվել հայերի կողմից, որի արդյունքում մի շարք հատվածներ իբրև թե կրճատվել կամ հարմարեցվել են Հայոց եկեղեցու և ընդհանրապես հայկական

քաղաքական նպատակներին, ուստի աղվանացման գործընթացը սկսվեց այդ հեղինակների երկերի բնագրային քննությամբ, ավելի ճիշտ աղճատմամբ:

Ադրբեջանական այս «տեսակետները» ամբողջական ձևով շարադրվեցին Ֆարիդա Մամեդովայի տարբերի տարիների աշխատանքի արդյունքը եղող «Кавказская Албания и албанцы» (Բաքու, 2005 թ.) գրքում, որում կեղծարարությունը սկսվում է հայ հեղինակների անունների կեղծելուց, այնպիսի ձևով ներկայացնելուց, որոնք հաստատող որևէ վկայություն չկա հայ միջնադարյան գրականության մեջ, ինչպես օրինակ Վարդան Արևելցի «Աղվանեցի» (Вардан Аревелци -Албанский), Ստեփանոս Օրբելյան (Степанос Орбели):

Աղվանական այս տեսության առաջին ամբողջական հերքումը ներկայացրեց Ասատուր Մնացականյանը «Աղվանից գրականության հարցի շուրջ» ուսումնասիրության մեջ, ռուսերեն տարբերակը՝ «О литературе Кавказской Албании» (Երևան, 1969):

Ծրագիրն իրականացնող խումբը, կարծում ենք, համոզիչ և փաստարկված ձևով ցույց է տվել, որ հայ միջնադարյան գրականության աղվանականացումը ոչ թե գիտական ուսումնասիրությունների եզրահանգմամբ է կատարվել, այլ դրա միջոցով հետապնդվող քաղաքական նպատակով, որպես մասը Արցախյան հարցի դեմ մղվող պայքարի: Այն լավագույնս արտահայտվել է Մամեդովայի վերը հիշված գրքի անգամ անոտացիայում, ուր գրքի համար ասվում է, թե նրանում «исследованы албанские истоки Карабахской проблемы»:

Գրքի առաջաբում էլ ասվում է, որ հայ պատմիչների մոտ հիշվող հայկական տեղանունների քննությամբ ցույց է տրվում, թե «с чем связаны попытки территориального обоснования и притязания армян к азербайджанским землям»:

Աշխատանքի մեջ ցույց է տրվում հայ պատմիչների և հեղինակների «աղվանացման» ընթացքը, թե վերջինս հիմնավորելու համար տեսական ինչ դրույթներ են առաջ քաշվում: Ըստ այսմ ներկայացվում է հարցի պատմությունը, ապա կատարվում է հերքումը, որը իրականացվում է զուտ գրականագիտական քննությամբ, թեև որպես հարակից նյութ վկայակոչվում են պատմագիտական ուսումնասիրությունները:

Աղվանացման այս ընթացքը քանի որ հիմնված է առաջին հերթին հայ հեղինակների երկերի, բնագրերի և նրանց ենթադրյալ ձևափոխությունների վրա, ուստի կատարվել է այդ երկերի բնագրային քննությունը այն շեշտադրմամբ, որ դրանք բնագրային ամբողջություն են կազմում և կրճատումներ հիշեցնող տարբերություններ չունեն: Ասվածը առավել հիմնավորելու համար վկայակոչվում են այդ երկերի եվրոպական հավաքածուներում պահվող ընդօրինակությունները, ցույց տալու համար, որ այնտեղ գտնվող վաղ շրջանի բնագրային ընդօրինակությունները ևս դուրս չեն գալիս մնացյալ օրինակների շրջանակից, հետևաբար եթե այդ գործերը Արևելյան Հայաստանի տարածքում որևէ կրճատման կամ վերախմբագրման ենթարկվեին 17-18-րդ դարերում, ապա տարբերությունները ակնհայտ կլինեին:

Մեկ առ մեկ բերվում են այսօրվա ադրբեջանցի աղվանագետների կողմից ներկայացվող բնագրային որպես թե հայկական միջավայրում կատարված փոփոխությունները և կրճատումները: Այնուհետև վկայակոչվում են տվյալ հոդվածների բնագրային տարընթերցվածները Մովսես Կաղանկատվացուց մինչև Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Այգեկցի, Ստեփանոս Օրբելյան:

Ցույց է տրվում, որ այդ հատվածում որևէ աղճատում կամ պահպանված որևէ տարընթերցում չկա, որը կվկայեր կատարված միտումնավոր փոփոխությունների մասին:

Հայոց արևելյան կողմանց գրականությունը յուրաքանչյուր հեղինակի դեպքում կատարվել է ըստ տվյալ ժամանակաշրջանի գրահանության և համապատասխան ժանրի համատեքստում, որ նրանք իրենց տիպաբանական հատկանիշներով տեղ գտած սյուժեների ու թեմաների ընդհանրությամբ և լեզվական կաղապարով մասն են կազմում հայ գրականությանը և արտահայտությունն են հայ ժողովրդի ազգայի իղձերի:

Ադրբեջանական հեղինակները քանի որ ձգտում են աղվանական գրականությունը միջոց դարձնել Արցախի հայկական պատկանելությունը ժխտելու փորձերում, առանձնակի ուշադրություն է հատկացվել Արցախի և հարակից շրջանների մասին այդ պատմիչների մոտ եղած հիշատակություններին:

Աշխատանքի կարևոր գիտական նորույթը կայանում է նրանում, որ ոչ թե այս կամ այն հեղինակի մասին գրելիս անդրադարձ է կատարվում այդ պատմիչի մասին

հայտնված կարծիքներին, այլ հարցը քննվում է համակարգային առումով, թե հայ պատմիչների որոշակի խմբի հանդեպ ինչ մոտեցմամբ, ինչ վերաբերմունք է դրսևորվել և ինչպես պետք է հերքել այն բնագրագիտական քննությամբ և գրականագիտական վերլուծությունների կիրառմամբ:

Ամբողջական աշխատանքը որպես կոլեկտիվ մենագրություն կազմում է 200 համակարգչային էջ:

Հաշվի առնելով, որ թեմայի ուսումնասիրությանը տրամադրված էր մեկ տարի և խմբի անդամները նոր են ավարտել և խմբագրել ամբողջական աշխատանքը, ուստի, տպագրության հանձնված հոդվածները գտնվում են հրատարակման փուլում հետևյալ գիտական պարբերականներում.

1. Վարդան Դևրիկյան, բ.գ.դ., «Հայ գրականության աղվանական անվանվող հատվածի մասին», «Գրականագիտական հանդես», 2019, հմր. Բ:
2. Վ. Դևրիկյան, բ.գ.դ., «Հայոց արևելյան կողմանց» գրականության տիպաբանական հատկանիշները հայ գրականության համատեքստում, «ՎԷմ», 2019, հմր. Դ:
3. Էմմա Գալոյան, բ.գ.թ., Հայ դասական գրողների բնորոշումները «Արևելյան կողմանց» հեղինակների մասին, «Գրականագիտական հանդես», 2019, հմր. Բ:
4. Հերիքնազ Ոսկանյան, բ.գ.թ., Հայ միջնադարյան լեգենդի արտացոլումը Մովսես Կաղանկատվացու, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու երկերում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2019, հմր, Դ:

Վարդան Դևրիկյան

Խմբի ղեկավար

30.09.2019

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԸ ՈՐՊԵՍ ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԻ ԻՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պայմանագրով նախատեսված համապատասխան 2019թ. չորրորդ եռամսյակային (հուլիս, օգոստոս, սեպտեմբեր) ժամանակահատվածի համար հետազոտական խումբը կատարել է հետևյալ աշխատանքները.

1. Փափուկ ուժի գործիքակազմի պռոյեկտում Հարավային-Կովկասի պրակտիկայում:
2. Հիմնավորվել են հարավ-կովկասյան տարածաշրջանում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման անհրաժեշտության հիմքերը և դրա ռեալիզացման փափուկ մեխանիզմները:
3. Ավարտական տեսքի են բերվել մենագրության համար պատրաստվող նյութերը:
4. Նկատի առնելով նաև այն հանգամանքը, որ ուսումնասիրվող նյութը բավական շատ է՝ մենագրության տպագրման և վերջնական տեսքի բերելու աշխատանքները թողնվել է ծրագրի հնարավոր երկարաձգման պարագային: Սակայն առաջադրված խնդրի վերաբերյալ խմբի անդամներից Էմիլ Օրդուխանյանը ծավալուն հոդված է պատրաստել և հանձնել տպագրության:

Է. Օրդուխանյանի հոդվածը վերաբերում է «փափուկ ուժի» միջոցով հարավ-կովկասյան բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրարման գործում մշակույթի դերին: Հետազոտության մեջ վերլուծության է ենթարկվում **«փափուկ ուժի» ռազմավարության մշակութային հենքը, ինչպես նաև առաջարկվում է «փափուկ ուժի» ռազմավարությունը կիրարկել մշակութային ռելյատիվիզմի միջոցով:**

Հետազոտության արդյունքում հոդվածի հեղինակն առաջ է քաշում առաջարկներ տարածաշրջանի կոնսոցիատիվացման ուղղությամբ: Մասնավորապես՝ արվում է հետևություն այն մասին, որ հարավ-կովկասյան բազմական հասարակություններում «փափուկ ուժի» գործադրման միջոցով կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրարկմանն ուղղված առաջարկների շարքը ժամանակի ընթացքում կարող է համալրվել նոր մոտեցումներով և գործիքներով: Դա նշանակում է, որ «փափուկ ուժը» բավականին ճկուն ռազմավարություն է տարածաշրջանային արդյունավետ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից: «Փափուկ ուժի» իրացման տեսանկյունից մշակույթի դերն առաջնահերթ է: Այն պետությունները, որոնց մշակութային հենքը թույլ է, չեն կարող օգտագործել

«փափուկ ուժը» իրենց շահերի իրացման նպատակով: Սակայն մշակութային հարուստ ժառանգություն, ինքնատիպություն ունեցող ժողովուրդների և պետությունների դեպքում «փափուկ ուժի» գործադրմամբ ազգային-պետական շահերի իրացումը կարող է ավելի արդյունավետ լինել: Հետևապես՝ ՀՀ-ն, որն ունի «փափուկ ուժի» գործադրման համար պահանջվող մշակութային բավարար ներուժ, ըստ անհրաժեշտության և նպատակադրումի, կարող է իրականացնել հարավ-կովկասյան տարածաշրջանի բազմական հասարակությունների կոնսոցիատիվացման նախ և առաջ տեսական հիմքերի մշակման գործառույթ՝ հետագայում դրա գործնական կիրառության քաղաքականության մշակման և իրականացման հեռանկարով:

Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհում պետությունների արտաքին ազդեցության գործիքակազմը անընդհատ հարստացվում է և համալրվում նոր հնարավորություններով: Ազդեցության ավանդական միջոցներին (ռազմական պոտենցիալ) այսօր արդեն ավելացել է և դարձել է գործուն մեխանիզմ նաև փափուկ ուժը:

Առաջադրված խնդրի նպատակն էր ուսումնասիրել փափուկ ուժը և հասկանալ դրա միջոցով Հարավային Կովկասում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կամ դրա տարրերի ներդրման հնարավորությունները: Այն, որ այս տարածաշրջանի բազմական հասարակություններում ստեղծված ժողովրդավարության կամ կեղծ ժողովրդավարության մոդելները պետք է փոխվեն հանուն տարածաշրջանի անվտանգ գոյության անկասկած է և հիմնավորվել է հետազոտության շրջանակներում: Սակայն ակնհայտ է նաև մեկ այլ բան, որ Հարավային Կովկասի բազմական հասարակությունների քաղաքական էլիտաները ձգտում են և կձգտեն ժողովրդավարության այն մոդելի պահպանմանը, որը իրենց համար ապահովում է էթնոկրատիայի խորացումը և ամրապնդումը: Բայց պարզ է նաև, որ բազմական հասարակությունների մյուս սեգմենտները ձգտելու են իրական ժողովրդավարությանը, սեփական ինքնության պահպանմանը, հակադրվելու են մեխանիկական շատություն ունեցող էթնոսի պարտադրած էթնոկրատիային՝ օգտվելով ամեն պատեհ հնարավորությունից՝ լինի դա սեփական ուժերի կազմակերպման միջոցով, թե արտաքն օժանդակության միջոցով: Միևնույն ժամանակ հնարավոր է, որ այս պարագայում կուտակված կոնֆլիկտային պոտենցիալը պայթի, և տարածաշրջանը մխրճվի ռազմական կոնֆլիկտների մեջ, ինչը տեղի ունեցավ ռուս-վրացական 2008թ. պատերազմի ժամանակ:

Այս մտահոգությունն է, որ հետազոտական խմբին ուղղորդեց դեպի կուտակված և կուտակվող կոնֆլիկտածին միջավայրի պատճառների հետազոտմանը և դրա համար արդյունավետ մեխանիզմի որոնմանը:

Հեռանկարում ունենալով տարածաշրջանի ժողովրդավարացման և անվտանգության պահանջը, հաշվի առնելով նաև բազմական (plural) հասարակություններում (Վրաստան, Ադրբեջան) տարածաշրջանի անվտանգության

վրա բացասականորեն ազդող պոտենցիալի լարումը (խոսքը բազմական հասարակության սեգմենտների բնական ակտիվության մասին է)՝ հարավ-կովկասյան տարածաշրջանի անվտանգությունը դառնում է շատ փխրուն և պահանջում է անվտանգության նոր մոդելի որոնում և դրա կիրառում: Ակնհայտ է, որ այդ տարբերակը կոնսոցիատիվ անվտանգության մոդելն է:

Այստեղ է, որ անփոխարինելի միջոց է դառնում տարածաշրջանում կոնսոցիատիվ ժողովրդավարությունը որպես մոդել: Այս մոդելի կիրառումը և դրա անխուսափելիության մեջ բազմական հասարակությունների ղեկավարներին պարտադրելուն կամ համոզելուն օգնում է փափուկ ուժի հայեցակարգը:

Տարածաշրջանային արդի իրողությունները և քաղաքական գործընթացի զարգացման դինամիկան կրկին անգամ հիմնավորում են սույն հետազոտության արդիականությունը և անհրաժեշտությունը, որի տեսական հանգրվանը պետք է հարավ-կովկասյան բազմական պետություններում փափուկ ուժի գործիքակազմի կիրառությամբ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի ներդրման հիմքերի մշակումը լինի՝ դրանց բոլոր տեղական շահագրգիռ կողմերի անուղղակի և ուղղակի ներգրավմամբ:

Ակնհայտ է, որ իր արդյունավետությունը տարբեր հարցերում ապացուցած փափուկ ուժը անփոխարինելի նշանակությունն է ունենալու այս հարցում: Փափուկ ուժի անդիմադրելի հմայքը տարածաշրջանի կոնսոցիատիվացման համար պետք է լինի ՀՀ քաղաքական վերնախավի արտաքին քաղաքական գործիքակազմի շատ կարևոր բաղադրիչ: Տարածաշրջանի կոնսոցիատիվ ապագան գիտության և ստեղծված պրակտիկայի պահանջն է:

Հետազոտական խմբի ղեկավար՝ **Լ. Ղ. Շիրինյան**

30. 09.2019

ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքի հաշվետվություն.

Թեմայի համար նախատեսված գումարով գնվել է համակարգիչ, 8 TB տարողությամբ սերվերային միացման հնարավորությամբ կրիչ, որը միացվել է ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի սերվերային ցանցին «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի 8 TB տարողությամբ հիշողության կրիչ, որի վրա արտագրվում է թվայնացված ողջ նյութը սերվերին միացնելու և կատարված աշխատանքների պահուստային տարբերակն ունենալու համար: Ձեռք են բերվել սկանավորման համապատասխան սարքավորումներ գրքերի մշակումը և թվայնացումը իրականացնելու համար: Սարքավորումները ձեռք են բերվել ՀՀ պետական գնումների ընթացակարգերին համապատասխան, դրանց վերաբերյալ առկա են բոլոր փաստաթղթերը: Ծրագրի առաջին փուլում նախապատրաստական աշխատանքների արդյունքում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանի և ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտի գործընկերների աջակցությամբ պատրաստվել է «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի թվային էջի աշխատանքային տարբերակը, որի հասանելիությունն ապահովելուց հետո մուտքագրված գրականությունը սկսվել է լրացվել թվային գրականությամբ ներբեռնելի ձևաչափի ապահովմամբ: Հընթացս կատարվել է կայքէջի գործիքակազմի ընդլայնում՝ մուտքագրվող արևելագիտական գրականության համապատասխան ուղղվածությունների բաժանմամբ: Կայքէջը հասանելի է KOHA համակարգում, մուտքագրված գրականությունը, աղբյուրները և հետազոտությունները կարելի է գտնել ինչպես բնօրինակի լեզվով, այնպես էլ, արևելյան լեզուների դեպքում մասնավորապես, դրանց լատինատառ տառադարձմամբ և/կամ ընդհանուր որոնման համար նախատեսված «կարդալ առցանց», «read online», «online» բանալի բառերի օգնությամբ: Որոնման արդյունքում գտնված ողջ էլեկտրոնային գրականությունը բաց մատչելիության է և հասանելի հետազոտողներին: «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) Ծրագրի շրջանակում, Ծրագրի կատարողների (ղեկավար պ.գ.դ. Ա. Բոզոյան, համակարգող մասնագետ Գ. Մարգարյան, օպերատոր-մատենագետներ Ա. Ավետիսյան, և Է. Ղազարյան) միացյալ ջանքերով, թվային շտեմարան է մուտքագրվել արևելագիտությանն ու արևելյան աղբյուրագիտությանն առնչվող շուրջ 1200 միավոր գրականություն՝ աղբյուրներ, հետազոտություններ, թարգմանություններ (հայալեզու, արաբերեն, օսմաներեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն) ինչպես նաև արևելյան աղբյուրագիտությանը վերաբերող շուրջ 300 սկզբնաղբյուր և ձեռագիր, 400 ից ավելի գիտական հոդվածներ, մատենագիտություններ և այլն: Կազմվել է Մատենադարանի քարտարանի հիման

վրա ցուցակագրված, հասանելի պարսկալեզու սկզբնաղբյուրների (բնագրային հրատարակություններ, բնագրային թարգմանություններ) համապատասխան ցուցակ, ինչպես նաև Մատենադարանի Արաբատառ քարտարանից դուրս է գրվել եւ պատրաստվել է շուրջ 100 անուն օսմաներեն, պարսկերեն, ժամանակակից թուրքերեն և արաբերեն հրատարակված գրքերի և ձեռագրերի ցանկ, նույն սկզբունքով դուրս է գրվել եւ մուտքագրվել է ադրբեջաներեն համարվող գրականության ցանկը հետագա մուտքագրման համար: Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանի աջակցությամբ միկրոֆիլմից սկանավորվել է շուրջ 40 կտոր եվրոպական գրականություն և Բրիտանական թանգարանի ու Վատիկանի երկու հայերեն ձեռագիր: Սկանավորումը կատարվել է Մաշտոցի անվ. Մատենադարանի մեքենայով: Իրականացվող աշխատանքի ընթացիկ փուլում սկանավորվել և թվայնացվել են մի քանի տասնյակ աղբյուրագիտական և պատմագիտական հետազոտություններ (ավելի քան 7000 էջ), ինչպես նաև սկանավորվել են 800 GB ծավալով սկզբնաղբյուրներ և հետազոտություններ, դրանց մի մասի մշակված թվային ֆայլերը մուտքագրվել են թվային շտեմարան: Դրանցից են օրինակ Արևելագիտության ինստիտուտի «Արևելյան աղբյուրագիտություն» (1 հատոր), «Кавказ и Византия» (6 հատոր), «Древний Восток» (5 հատոր) պարբերակները, ինստիտուտի աշխատակիցներ Արամ Տեր-Ղևոնդյանի (2 գիրք), Պավել Չոբանյանի (3 գիրք), Պ. Մուրադյանի (4 գիրք), Ազատ Բոզոյանի (4 գիրք), Ալեքսան Հակոբյանի (3 գիրք), Քրիստինե Կոստիկյանի (3 գիրք), Հարություն Ժամկոչյանի (6 գիրք), Հասմիկ Մկրտչյանի (1 գիրք), Լորետա Դանեղյանի (1 գիրք), «Կովկաս և Բյուզանդիա» ժողովածուների հատորաշարը (6 հատոր), «Հին Արևելք» ժողովածուների հատորաշարը (5 հատոր), «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը» (Զեկուցումներ և զեկուցումների դրույթների ժողովածուներ, 6 հատոր) և այլոց մենագրությունները և հոդվածների ժողովածուները: Այս գրականության սկանավորումը կատարվել է «ԱԱՀԹԳ» էլեկտրոնային գրադարանին ՀՀ ԳԱԱ ՀՈՒՖՀՀ դրամաշնորհի շրջանակներում ձեռք բերված սկանավորման մեքենայով: Նշենք, որ թվայնացված գրականության մի զգալի մասը դեռևս մշակման փուլում է, և աշխատանքներ են տարվում դրանց թվային ավելի փոքրածավալ և որոակյալ թվային տարբերակների վերածման համար, որից հետո դրանք ևս կտեղադրվեն կայքէջում: Թվայնացված գրականության շարքում տեղ են գտել նաև արևելագիտական ուղղվածության տարատեսակ և տարբեր ժամանակներում հրատարակված լավագույն բառարաններ՝ արաբերեն, պարսկերեն, օսմաներեն, թուրքերեն, վրացերեն լեզուներից դեպի եվրոպական լեզուներ թարգմանությամբ:

Կատարված աշխատանքներից մասնավորապես հարկ է առանձնացնել **ա)** պարսկալեզու ավելի քան հարյուր պարսկալեզու աղբյուրների և սկզբնաղբյուրների, հետազոտությունների մուտքագրումը, դրանցից են օրինակ ՝14-րդ դարի պարսիկ պատմագիր Համդալլահ Ղազվինիի պատմական և պատմա-աշխարհագրական բնույթի աշխատություններ՝ «Թարիխ-ե Գոզիդե», «Զաֆար-Նամե», (պրսկ.), Միրզա

Մուհամմեդ Հայդարի «Թարիխ-ե Ռաշիդի» աշխատությունը (1895 թվականի հրատարակություն, անգլ. թարգմ.), Աբու Բեքր իբն Աբդուլլահի «Թարիխ-ե Օսման Փաշա» (պրսկ.), 14-րդ դարի հայտնի ճանապարհորդ-աշխարհագիր Իբն Բատուտայի «Իբն Բատուտայի ճանապարհորդությունները», (անգլ. թարգմ.), 15-րդ դարի նշանավոր պատմագիր Շարաֆ Ալ Դին Յազդիի «Զաֆար-նամե» աշխատությունը, Հասան Բեգ Ռումլուի «Ահսան ութ- Թավարիխ», «Թարիխ-ե Իբն Խալդուն», «Թարիխ-ե Ալ Ջելդի» աշխատությունները (պրսկ.), «Հաֆիզի Աբրուի՝ Ջողրաֆիա» և այլն, **բ)** մուտքագրված արաբերեն և վրացերեն աղբյուրները, դրանց թարգմանությունները և հետազոտությունները, որոնց շարքում են Իբն ալ-Ասիրի, աթ-Թաբարիի, Ահմեդ իբն Արաբշահի, Մաքրիզիի, Թաղրիբիրդիի, ալ-Բալազուրիի, ալ-Այնիի, Քարթլիս Ցխովրեբայի, վրաց Վախթանգ VI արքայի երկերի, Ժորդանիայի և այլոց վրաց վավերագրերի և հրովարտակների ժողովածուների և այլն թվային տարբերակները իրենց համապատասխան մատենագիտական տվյալների մուտքագրմամբ և լատինատառ տառադարձմամբ որոնման ավելի դյուրացման համար, **գ)** Աղբյուրագիտական թվային շտեմարան է մուտքագրվել ավելի քան 160 անուն օսմաներեն, թուրքերեն, ադրբեջաներեն լեզուներով աղբյուրներ (Լյութֆուլլա փաշա, Աշըքփաշազադե, Ահմեդ Ջևդեթ փաշա) և մասնագիտական գրականություն: Մուտքագրված նյութերը վերաբերվել են մասնավորապես թուրք միջնադարյան գրականությանը, պատմությանը, պատմագրությանը, լեզվաբանությանը, **դ)** թվային գրադարանի կայքէջում տեղադրվել են նաև վերջին երեք տասնամյակների արևելագիտական հրապարակումներ, ինչպես աղբյուրների, այնպես էլ հետազոտությունների, հոդվածների և այլ հրապարակումների տեսքով: <u>Կարևոր է նշել նաև, որ ձեռք է բերվել պայմանավորվածություն ինչպես ՀՀ գիտական ինստիտուտների (մասնավորապես ՀՀ ԳԱԱ ՀԱԻ), այնպես էլ Վրաստանի Ձեռագրերի կենտրոնի և Ջավախիշվիլիի անվան պետական համալսրանի գործընկերների հետ</u>՝ ինչպես նոր հրատարակված, այնպես էլ եղած հնարավոր թվային գրականության ձեռքբերման և կայքէջում տեղադրման համար: Բացի այդ ձեռք է բերվել համաձայնություն Երուսաղեմի, Բոլոնիայի և Միչիգանի (ԱՄՆ) համալսարանների Արևելագիտության ինստիտուտների ներկայացուցիչների և ծրագրի ղեկավար պ.գ.դ. Ա. Բոզոյանի միջև գրադարանի թվային պաշարների հարստացման և կատարվող աշխատանքներին աջակցելու գործում: Նշենք նաև, որ «ԱԱՀԹԳ» թվային գրադարանը ներկայացվել է «Արևելյան Աղբյուրագիտությունը Հայաստանում ԻԱ դարի սկզբին» միջազգային գիտաժողովում (20-21 հունիսի 2019 թ.) և **արժանացել է գիտաժողովի թե՛ հայ, թե՛ օտարերկրյա մասնակից գիտնականների դրվատանքին**: Գրադարանում կատարված աշխատանքի մասին պատմող տեսանյութը դրվել է «ԱԱՀԹԳ» գրադարանի կայքէջում:

ղեկավար՝ պ.գ.դ. Ազատ Բոզոյան

(1 հուլիսի – 30 սեպտեմբեր 2019 թ.)

ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքի հաշվետվություն.

ղեկավար՝ պ.գ.դ. Ազատ Բոզոյան

(1 հոկտեմբեր 2018 – 30 սեպտեմբեր 2019 թ.)

Ստորև ներկայացվում է Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները համակարգված ըստ եռամսյակների.

Ա. Թվային գրադարան ստեղծելու **2018 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր** ամիսներին կատարվել են հետևյալ աշխատանքները.

1/ պ.գ.դ. Ա. Բոզոյանի ղեկավարությամբ աշխատանքի են ընդունվել պ.գ.թ. Գ. Մարգարյանը /համակարգող մասնագետ/, օպերատոր-մատենագետներ՝ Ա. Ավետիսյանը և Է. Ղազարյանը: Նրանցից յուրաքանչյուրի առջև խնդիր է դրվել մուտքագրել և թվայնացնել Միջնադարյան Մերձավոր Արևելքում և Միջերկրայքում ստեղծված բազմադարյան մատենագրական հուշարձանները, ինչպես նաև դրանց շուրջ ստեղծված պատմագրական, գրականագիտական, լեզվաբանական, իրավաբանական և կրոնագիտական ողջ գրականությունը: Յուրաքանչյուր մասնագետի և ինստիտուտի տնօրինության հետ կնքվել է համապատասխան պայմանագրեր:

2/ Հիշյալ աշխատակիցները քննարկել են թվային գրադարանի տարողության և ստեղծման խնդիրները ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի քարտագրման և թվայնացման բաժինների աշխատակիցների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտի և Հանրային գրադարանի մասնագետների անշահախնդիր աջակցությամբ:

3/ Թեմայի մասնակիցները չորս-հինգ շաբաթվա ընթացքում յուրացրել են քարտագրման ժամանակակից սկզբունքները ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի ինֆորմատիկայի բաժնում:

4/ Թեմայում ընդգրկված մասնագետներից յուրաքանչյուրի համար ստեղծվել է համապատասխան աշխատանքային պլան:

5/ ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի և Հայաստանի հանրային գրադարանի մասնագետները մեզ են տրամադրել Կոհա ծրագրի համապատասխան էջ, որի մեջ մեր թեմայի մասնակիցները վերջին երկու ամիսների ընթացքում մշակում և տեղադրում են մուտքագրված գրականությունը:

6/ Թեմայի համար նախատեսված գումարով գնվել է համակարգիչ և համապատասխան սարքավորումներ գրքերի մշակումը և թվայնացումը իրականացնելու համար: Գնված սարքավորումների մասին ավելի լիարժեք տեղեկությունները տե՛ս ֆինանսական հաշվետվության մեջ, որը կազմել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հաշվապահ Կարինե Ստեփանյանը:

7/ նախապատրաստական աշխատանքներ են տարվել թվային գրադարանի ինտերնետային էջը ստեղծելու համար, բանակցություններ են ընթացել ծրագրավորողների հետ:

Բ. Թվային գրադարան ստեղծելու համար **(1 հունվար – 31 մարտ 2018 թ.)** կատարվել են հետևյալ աշխատանքները.

1/ «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» Ծրագրի շրջանակում մուտքագրվել է արևելագիտությանն ու արևելյան աղբյուրագիտությանն առնչվող շուրջ 500 միավոր գրականություն՝ աղբյուրներ, հետազոտություններ, թարգմանություններ (հայալեզու, արաբերեն, օսմաներեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն) ինչպես նաև արևելյան աղբյուրագիտությանը վերաբերող շուրջ 150 գիտական հոդված գիտական տարբեր պարբերականներից:
բ/ Կազմվել է Մատենադարանի քարտարանի հիման վրա ցուցակագրված, հասանելի պարսկալեզու սկզբնաղբյուրների (բնագրային հրատարակություններ, բնագրային թարգմանություններ) համապատասխան ցուցակ, ինչպես նաև Մատենադարանի Արաբատառ քարտարանից դուրս է գրվել և պատրաստվել է շուրջ 50 անուն օսմաներենով եւ ժամանակակից թուրքերենով հրատարակված գրքերի ցանկ, նույն սկզբունքով դուրս է գրվել եւ ճշգրտվել է նախկինում ադրբեջաներեն համարվող գրականության ցանկը հետագա մուտքագրման համար:
3/ Մուտքագրված գրականության մի մասն արդեն իսկ լրացվել է էլեկտրոնային հղումներով և «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի էջում դրանք հասանելի են թվային տարբերակով:
4/ Պատրաստվել է «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի թվային էջի աշխատանքային տարբերակը, որն արդեն հասանելի է Koha համակարգում:

Գ. Թվային գրադարան ստեղծելու համար **(1 ապրիլի – 30 հունիսի 2019 թ.)**
կատարվել են հետևյալ աշխատանքները.
1/ Թվային շտեմարան է մուտքագրվել արևելագիտությանն ու արևելյան աղբյուրագիտությանն առնչվող շուրջ 800 միավոր գրականություն՝ աղբյուրներ, հետազոտություններ, թարգմանություններ (հայալեզու, արաբերեն, օսմաներեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն) ինչպես նաև արևելյան աղբյուրագիտությանը

վերաբերող շուրջ 150 սկզբնաղբյուր և ձեռագիր, 250 գիտական հոդված գիտական տարբեր պարբերականներից:
2/ Կազմվել է Մատենադարանի քարտարանի հիման վրա ցուցակագրված, հասանելի պարսկալեզու սկզբնաղբյուրների (բնագրային հրատարակություններ, բնագրային թարգմանություններ) համապատասխան ցուցակ, ինչպես նաև Մատենադարանի Արաբատառ քարտարանից դուրս է գրվել եւ պատրաստվել է շուրջ 100 անուն օսմաներեն, պարսկերեն, ժամանակակից թուրքերեն և արաբերեն հրատարակված գրքերի և ձեռագրերի ցանկ, նույն սկզբունքով դուրս է գրվել եւ մուտքագրվել է ադրբեջաներեն համարվող գրականության ցանկը հետագա մուտքագրման համար: Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանի աջակցությամբ միկրոֆիլմից սկանավորվել է շուրջ 40 կտոր եվրոպական գրականություն և Բրիտանական թանգարանի ու Վատիկանի երկու հայերեն ձեռագիր /շուրջ 30 GB ծավալով/: Սկանավորումը կատարվել է Մաշտոցի անվ. Մատենադարանի մեքենաներով: **Այդ գրականության մուտքագրումը ԿՈՀԱ համակարգ կկատարվի համապատասխան տարողություններ ունենալու դեպքում:**
3/ Կոհայի ցանցում ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտը Թվային գրադարանին է տրամադրվել մեկ TB հիշողություն: Մուտքագրված գրականությանն ավելացվել է շուրջ 300 անուն նոր մուտքագրում, որոնք լրացվել են էլեկտրոնային հղումներով և «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի էջում դրանք հասանելի են դարձել թվային տարբերակով:
4/ Իրականացվող աշխատանքի այս փուլում սկանավորվել և թվայնացվել են 10 GB ծավալով մի քանի տասնյակ աղբյուրագիտական հետազոտություններ, ինչպես նաև 60 GB ծավալով սկզբնաղբյուրներ և հետազոտություններ, որոնք յընթացս մուտքագրվում են թվային շտեմարան: Այդ գրքերի մեջ սկանականավորվել են Արևելագիտության ինստիտուտի «Արևելյան աղբյուրագիտություն» (1 հատոր), «Кавказ и Византия» (6 հատոր), «Древний Восток» (5 հատոր) պարբերակները, ինստիտուտի աշխատակիցներ Արամ Տեր-Ղևոնդյանի (2 գիրք), Պավել Չոբանյանի (3 գիրք), Պ. Մուրադյանի (4 գիրք), Ազատ Բոզոյանի (4 գիրք), Ալեքսան Հակոբյանի (3 գիրք), Քրիստինե Կոստիկյանի (3 գիրք), Հարություն Ժամկոչյանի (6 գիրք), Հասմիկ Մկրտչյանի (1 գիրք), Լորետա Դանեղյանի (1 գիրք) և այլոց մենագրությունները (ընդամենը՝ 40) և հոդվածները (շուրջ 200 կտոր): Այս գրականության սկանավորումը կատարվել է «ԱԱՀԹԳ» էլեկտրոնային գրադարանին ՀՀ ԳԱԱ ՀՈՒՖՀՀ դրամաշնորհի շրջանակներում ձեռք բերված մեքենայով:
5/ Վերախմբագրվել է «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի թվային էջի՝ http://e-libros.asnet.am/ աշխատանքային տարբերակը, որն արդեն երկու ամիս է, ինչ հասանելի է Koha համակարգում: Այստեղ ընթերցողը կարող է կատարել փնտրտուք այն մեկ տեռաբայթի սահմաններում, որ մեզ է տրամադրել ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտը: Փնտրտուքի արդյունքում

գտնված ողջ էլեկտրոնային գրականությունը բաց մատչելիության է և հասանելի հետազոտողներին:

Դ. Թվային գրադարան ստեղծելու համար **1 հուլիս – 30 սեպտեմբեր 2019 թ.** կատարվել են հետևյալ աշխատանքները. Ձեռք են բերվել սկանավորման համապատասխան սարքավորումներ գրքերի մշակումը և թվայնացումը իրականացնելու համար: Սարքավորումները ձեռք են բերվել ՀՀ պետական գնումների ընթացակարգերին համապատասխան, դրանց վերաբերյալ առկա են բոլոր փաստաթղթերը: Ծրագրի առաջին փուլում նախապատրաստական աշխատանքների արդյունքում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանի և ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտի գործընկերների աջակցությամբ պատրաստվել է «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան»-ի թվային էջի աշխատանքային տարբերակը, որի հասանելիությունն ապահովելուց հետո մուտքագրված գրականությունը սկսվել է լրացվել թվային գրականությամբ ներբեռնելի ձևաչափի ապահովմամբ: Հընթացս կատարվել է կայքէջի գործիքակազմի ընդլայնում՝ մուտքագրվող արևելագիտական գրականության համապատասխան ուղղվածությունների բաժանմամբ: Կայքէջը հասանելի է KOHA համակարգում, մուտքագրված գրականությունը, աղբյուրները և հետազոտությունները կարելի է գտնել ինչպես բնօրինակի լեզվով, այնպես էլ, արևելյան լեզուների դեպքում մասնավորապես, դրանց լատինատառ տառադարձմամբ և/կամ ընդհանուր որոնման համար նախատեսված «կարդալ առցանց», «read online», «online» բանալի բառերի օգնությամբ: Որոնման արդյունքում գտնված ողջ էլեկտրոնային գրականությունը բաց մատչելիության է և հասանելի հետազոտողներին: «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) Ծրագրի շրջանակում, Ծրագրի կատարողների (ղեկավար պ.գ.դ. Ա. Բոզոյան, համակարգող մասնագետ Գ. Մարգարյան, օպերատոր-մատենագետներ Ա. Ավետիսյան, և Է. Ղազարյան) միացյալ ջանքերով, թվային շտեմարան է մուտքագրվել արևելագիտությանն ու արևելյան աղբյուրագիտությանն առնչվող շուրջ 1200 միավոր գրականություն՝ աղբյուրներ, հետազոտություններ, թարգմանություններ (հայալեզու, արաբերեն, օսմաներեն, պարսկերեն, վրացերեն, հունարեն) ինչպես նաև արևելյան աղբյուրագիտությանը վերաբերող շուրջ 300 սկզբնաղբյուր և ձեռագիր, 400 ից ավելի գիտական հոդվածներ, մատենագիտություններ և այլն: Կազմվել է Մատենադարանի քարտարանի հիման վրա ցուցակագրված, հասանելի պարսկալեզու սկզբնաղբյուրների (բնագրային հրատարակություններ, բնագրային թարգմանություններ) համապատասխան ցուցակ, ինչպես նաև Մատենադարանի Արաբատառ քարտարանից դուրս է գրվել եւ պատրաստվել է շուրջ 100 անուն օսմաներեն, պարսկերեն, ժամանակակից թուրքերեն և արաբերեն հրատարակված գրքերի և ձեռագրերի ցանկ, նույն սկզբունքով դուրս է գրվել եւ մուտքագրվել է ադրբեջաներեն համարվող գրականության ցանկը հետագա մուտքագրման համար: Երևանի Մաշտոցի անվ.

Մատենադարանի աջակցությամբ միկրոֆիլմից սկանավորվել է շուրջ 40 կտոր եվրոպական գրականություն և Բրիտանական թանգարանի ու Վատիկանի երկու հայերեն ձեռագիր: Իրականացվող աշխատանքի ընթացիկ փուլում սկանավորվել և թվայնացվել են մի քանի տասնյակ աղբյուրագիտական և պատմագիտական հետազոտություններ (ավելի քան 7000 էջ), ինչպես նաև սկանավորվել են 800 GB ծավալով սկզբնաղբյուրներ և հետազոտություններ, դրանց մի մասի մշակված թվային ֆայլերը մուտքագրվել են թվային շտեմարան: Նշենք, որ թվայնացված գրականության մի զգալի մասը դեռևս մշակման փուլում է, և աշխատանքներ են տարվում դրանց թվային ավելի փոքրածավալ և որակյալ թվային տարբերակների վերածման համար, որից հետո դրանք ևս կտեղադրվեն կայքէջում:

Կատարված աշխատանքներից մասնավորապես հարկ է առանձնացնել **ա)** պարսկալեզու ավելի քան հարյուր պարսկալեզու աղբյուրների և սկզբնաղբյուրների, հետազոտությունների մուտքագրումը, դրանցից են օրինակ `14-րդ դարի պարսիկ պատմագիր Համդալլահ Ղազվինիի պատմական և պատմա-աշխարհագրական բնույթի աշխատություններ՝ «Թարիխ-ե Գոզիդե», «Զաֆար-Նամե», (պրսկ.), Միրզա Մուհամմեդ Հայդարի «Թարիխ-ե Ռաշիդի» աշխատությունը (1895 թվականի հրատարակություն, անգլ. թարգմ.), Աբու Բեքր իբն Աբդուլլահի «Թարիխ-ե Օսման Փաշա» (պրսկ.), 14-րդ դարի հայտնի ճանապարհորդ-աշխարհագիր Իբն Բատուտայի «Իբն Բատուտայի ճանապարհորդությունները», (անգլ. թարգմ.), 15-րդ դարի նշանավոր պատմագիր Շարաֆ Ալ Դին Յազդիի «Զաֆար-նամե» աշխատությունը, Հասան Բեգ Ռումլուի «Ահսան ութ- Թավարիխ», «Թարիխ-ե Իբն Խալդուն», «Թարիխ-ե Ալ Ջելդի» աշխատությունները (պրսկ.), «Հաֆիզի Աբրուի՝ Ջողրաֆիա» և այլն, **բ)** մուտքագրված արաբերեն և վրացերեն աղբյուրները, դրանց թարգմանությունները և հետազոտությունները, որոնց շարքում են Իբն ալ-Ասիրի, աթ-Թաբարիի, Ահմեդ իբն Արաբշահի, Մաքրիզիի, Թաղրիբիրդիի, ալ-Բալազուրիի, ալ-Այնիի, Քարթլիս Ցխովրեբայի, վրաց Վախթանգ VI արքայի երկերի, Ժորդանիայի և այլոց վրաց վավերագրերի և հրովարտակների ժողովածուների և այլն թվային տարբերակները իրենց համապատասխան մատենագիտական տվյալների մուտքագրմամբ և լատինատառ տառադարձմամբ որոնման ավելի դյուրացման համար, **գ)** Աղբյուրագիտական թվային շտեմարան է մուտքագրվել ավելի քան 160 անուն օսմաներեն, թուրքերեն, ադրբեջաներեն լեզուներով աղբյուրներ (Լյութֆուլլա փաշա, Աշըքփաշազադե, Ահմեդ Ջևդեթ փաշա) և մասնագիտական գրականություն: Մուտքագրված նյութերը վերաբերվել են մասնավորապես թուրք միջնադարյան գրականությանը, պատմությանը, պատմագրությանը, լեզվաբանությանը, **դ)** թվային գրադարանի կայքէջում տեղադրվել են նաև վերջին երեք տասնամյակների արևելագիտական հրատապարակումներ, ինչպես աղբյուրների, այնպես էլ հետազոտությունների, հոդվածների և այլ հրապարակումների տեսքով: <u>Կարևոր է նշել նաև, որ ձեռք է բերվել պայմանավորվածություն ինչպես ՀՀ գիտական ինստիտուտների (մասնավորապես ՀՀ ԳԱԱ ՀԱԻ), այնպես էլ Վրաստանի Ձեռագրերի</u>

կենտրոնի և Ջավախիշվիլիի անվան պետական համալսրանի գործընկերների հետ՝ ինչպես նոր հրատարակված, այնպես էլ եղած հնարավոր թվային գրականության ձեռքբերման և կայքէջում տեղադրման համար: Բացի այդ ձեռք է բերվել համաձայնություն Երուսաղեմի, Բոլոնիայի և Միչիգանի (ԱՄՆ) համալսարանների Արևելագիտության ինստիտուտների ներկայացուցիչների և ծրագրի ղեկավար պ.գ.դ. Ա. Բոզոյանի միջև գրադարանի թվային պաշարների հարստացման և կատարվող աշխատանքներին աջակցելու գործում: Նշենք նաև, որ «ԱԱՀԹԳ» թվային գրադարանը ներկայացվել է «Արևելյան Աղբյուրագիտությունը Հայաստանում ԻԱ դարի սկզբին» միջազգային գիտաժողովում (20-21 հունիսի 2019 թ.) և **արժանացել է գիտաժողովի թե՛ հայ, թե՛ օտարերկրյա մասնակից գիտնականների դրվատանքին**: Գրադարանում կատարված աշխատանքի մասին պատմող տեսանյութը դրվել է «ԱԱՀԹԳ» գրադարանի կայքէջում:

թեմայի ղեկավար՝ Ա. Բոզոյան

30.09.2019

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Արցախի ազատագրված տարածքների

ամրոցների ուսումնասիրություն

գիտական ծրագրի

01.10.2018 - 01.10.2019

կատարած աշխատանքների

Հաշվետու ժամանակաշրջանում Արցախի ազատագրված տարածքների ամրոցների ուսումնասիրություն ծրագիրը իրականացնող գիտական խումբը հետազոտություններ է կատարել Արցախի Հանրապետության Քաշաթաղի, Հադրութի, Շահումյանի, Մարտակերտի և Ասկերանի շրջանների ազատագրված տարածքներում: Ուսումնասիրվել են ինչպես նախկինում հաշվառված և Արցախի պատմամշակութային հուշարձանների կադաստրում գրանցված հուշարձաններ, այնպես էլ նորահայտ՝ այս ծրագիրի իրականացման ժամանակաշրջանում դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում բացահայտված ու փաստագրված ամրոցներ: Վերջիններից են՝ Խոզնավարի լիճ, Քարվաճառ, Ծար 1, Քարոտան, Ցից սար ամրոցները և Վայունիք ու Շահարջիկ անվանված, իրենց մեծությամբ ու հզորությամբ աննախադեպ, քաղաքատեղիները: Այս հաշվետվության մեջ տեղ չեն գտել ևս 5 - 6 ամրոցներ, որոնց դաշտային փաստագրական նյութերը հավաքված են, բայց դրանց կամերալ մշակումը ընթացքի մեջ է:

ԱՂԱՎՆՈ ԵՎ ՀՈՉԱՆՑ ԳԵՏԵՐԻ ՀՈՎԻՏՆԵՐԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ



Աղավնո և Հոչանց գետերի հովիտների նորահայտ ամրոցները

Արահուծ

Գտնվում է Արահուծ գյուղից մոտ 1,5 կմ հարավ-արևմուտք, Աղավնո գետի Խնածախ օժանդակի աջ ափին բարձրացող բլրի գագաթին: Հուշարձանը արևելք-արևմուտք ձգվածությամբ տձև երկարավուն հատակագծով է և ամբողջովին եզերված շրջապարիսպով:

Պարիսպը լայնությամբ երկշերտ է, կառուցված միջին չափի անմշակ քարերից՝ մանր քարերի ու կավահողի բուտով:

Պահպանված բարձրությունը մինչև 1,5

մ է: Պարսպապատերի ներսում նկատվում են բազմաթիվ ուղղանկյուն ու կլորացող

շինությունների պատեր: Հուշարձանը ունի մի քանի շինարարական շերտ և կրում է վերակառուցումների ու ավելացումների հետքեր: Ամրոցի զբաղեցրած տարածքում ավելի վաղ եղել են 5-6 մեծ դամբարաններ, որոնցից մնացել են կրոմլեխների կորագիծ հատվածվները: Դամբարանները հնում կաղապտվել են և նրանց, զգալիորեն ավելի մեծ քարերից շարված կիսագետնափոր, ուղղանկյուն, թաղումնային խցերը օգտագործվել ամրոցի բնակիչների կողմից որպես կացարաններ:

Հյուսիսային եզրին հստակ նկատվում է ամրոցի գլխավոր մուտքը՝ ընդգծված երկու մեծ, կուռք հիշեցնող քարերով: Խնածախ գետակի ձորից դեպի ամրոց է բարձրանում մոտ 0,7 կմ ձգվող հին, պատմական ճանապարհը: Այն իր ընթացքի գրեթե ողջ երկարությամբ ուղղորդվում է ցից քարերով շարված հենապատերով: Ճանապարհը մտնելով ամրոց անցնում է երկու կողմերից պատաշարերով ներփակված միջանցքով և գնում դեպի հարավ ու արևելք:

Հուշարձանում վերգետնյա նյութը սակավ է, բայց դատելով շինտեխնիկայից, ամրոցը կարելի է նախնական թվագրել անտիկից մինչև վաղ միջնադար ընկած ժամանակաշրջաններով:

Խոզնավարի լիճ

Գտնվում է Միրիկ համայնքի արոտավայրերում, ալպյան մարգագետինների գոտում, Խոզնավարի լիճ կոչվող բնական լճակի հարավային ափի բլրին: Հուշարձանը տեղակայված է ՀՀ և ԱՀ սահմանագլխին, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Խոզնավար գյուղից 2.5 կմ արևմուտք: Ամրոցը զբաղեցնում է երկարավուն, կոնաձև բլրի հարթեցված գագաթը և մասամբ, լանջերը:

Ամրոցը շատ վատ է պահպանվել: Այսօր հատվածաբար երևում է վերին պարսպագիծը, իսկ ստորինը ուրվագիծվում է որպես ռելիեֆ: Տեղակայված լինելով բնական լճաիկի ափին ամրոցի տարածքը մշտապես օգտագործվել է որպես անասնապահական ամարանոց: Լճակի ափերին և մասնավորապես ամրոցի վրա տարբեր ժամանակներում կառուցվել ու վերակառուցվել են անասնափարախներ՝ աղլներ: Վերջիններիս շինաքարերը վերցվել են ամրոցի պարիսպներից, նախապես ճեղքելով ու փոքրացնելով: Հուշարձանի տարածքում դրված փարախները հիմնականում կցվել են ամրոցի վերին պարսպին դրսից և երևում է, որ նրանց մեկ պատը ամրոցի հնագույն շերտի կիկլոպյան շարվածքով պարիսպն է: Վերին պարսպագիծը ուրվագծվում է հատվածաբար տեղ տեղ երևացող պարսպագծի քարերով: Երկրորդ՝ ստորին պարսպաշարը, որ եզերում էր բնակատեղիի դարավանդը ծածկված է խոտածածկույթով և հստակ չի ուրվագծվում: Բոլոր անասնափարախները և հնագույն կիկլոպյան պարիսպները շարված են անմշակ քարորից չոր շարվածքով, բայց տարբերվում են քարերի մեծությամբ ու շարվածքի հարաբերական կանոնավորությամբ:

Միջնաբերդի ներսի տարածքը համեմատաբար հարթ է, բայց կարուցապատման ցայտուն հետքեր չեն երևում: Հուշարձանում վերգետնյա խեցեղենը սակավ է: Բացված խուզահորանից հայտնաբերված խեցեղենը տարաժամանակյա է, բայց վաղագույնը վերաբերվում է բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանին (Ք. ա. 2-1 հազ.), որով և պետք է թվագրել ամրոցը:

Ամրոցի հս-արե, թամբաձև իջվածքի հարթակում պահպանվել են կրոմլեխներով եզերված սալարկղային թաղումներ, որոնք բոլորն էլ կրում են կողոպտվածության նշաններ: Լճակը ներփակող բլրաշղթայի ջրբաժան գծին

նկատվում են շարքով գնացող խոշոր դամբարանաբլուրներ:

Ամրոցի ստորոտում, դեպի Խոզնավար գյուղ իջնող ճանապարհին հարող հարթակում հայտնաբերվել է ձկնակերպ վիշապաքար: Այն 2,45 մ երկարությամբ և մոտ 0,5 մ տրամագծով բազալտե կոթող է, որի վերին հատվածը լավ մշակված կլորացված է իսկ գագաթին նկատվում է փորագրված ձկան գլուխը և աջկը: Կոթողի ստորին մասը մշակված չէ և, ըստ ամենայնի, այն կանգնած է եղել: Վիշապաքարը տեղահան արված է, ընկած մելիորացված քարակույտերի մեջ: Տվյալ կոթողը պետք դիտարկել ամրոցի և լճատի համատեքստում և չի բացառվում, որ ի սկզբանե այն կանգնած է եղել հենց նրանց

մոտ:

Կռապաշտի տներ

Հուշարձանը գտնվում է ներկայումս անբնակ նախկին Լաչինի շրջանի Ներքին Ջիջիմլի գյուղի հարավային եզրին, Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղի ձորամիջյան այգիների մոտ, Կոռնիձոր գետակի ձախ ափի ընդարձակ հարթակի արևմտյան վերջավորությունում,: Այստեղ հյուսիս-հարավ առանցքով 100 մ երկարությամբ հաջորդաբար տեղակայված են կեղծ թաղով պսակվող 7 (յոթ) քարակոփ սենյակների (դոլմենների) նմանվող ուղղանկյուն խցեր՝ կառուցված ահռելի անմշակ քարերից չոր շարվածքով: Խցերից երկուսը կիսագետնափոր են, իսկ մյուսները՝ վերգետնյա: Բոլոր շինությունները կողմնորոշված են արևելք-արևմուտք առանցքով, ներփակված են եղել քարաշար մոգագան շրջանակներով՝ կրոմլեխներով և ամփոփված դամբարանաբլուրների բարձր լիցքի տակ: Դամբարանները հնում բացվել, կողոպտվել են իսկ թաղումնային խցերը հետագայում օգտագործվել են որպես պատրաստի կացարաններ:

Հուշարձանը վատ է պահպանվել՝ հեռացված են դամբարանաբլուրների լիցքերը, ծածկասալերը տեղ տեղ կոտրված թափված են, իսկ ծայր հարավային, փոքր բլրակի վրա կանգնած, առաջին դամբարանից մնացել է միայն հարավային պատի հատվածը: Խորհրդային տարիներին անցկացված ճանապարհը հատել է հուշարձանախմբի հյուսիսային եզրը, իսկ դիմացի հրապարակում կազմակերպած անասնակայանի տարածքը մաքրելիս, քարերը հրել, լցրել են հուշարձանի վրա:

Այսօր երևում են երկրորդ դամբարանի 7.0 մ տրամագծով հզոր կրոմլեխի մասերը, թաղումնային խուցը մուտքի եռանկյունի բարավոր հիշեցնող ճակտոնով, ու կրոմլեխի մեջ ներառնված N 3 դամբարանախուցը: Կողքի N 4 և 5 դամբարանների կիսավեր խցերը երևում են բայց կրոմլեխներն ու շրջակայքը պատված է լցված քարերով: Ուշագրավ են N 6 և N 7, մեկ ընդհանուր կրոմլեխի մեջ վերցված ու լավ պահպանված խցերը: Նրանք դրված են հաջորդաբար, արևելք-արևմուտք երկայնական առանցքով, թեքադիր տեղանքի բարձրության տարբեր նիշերին և, ըստ ամենայնի, ունեն ժամանակագրական որոշակի շեղում: 7-րդ, ամենամեծ կառույցը ունի դեպի դամբարանախուցը եկող ճնապարհ՝ դրոմոս և հստակ կազմակերպված շքամուտք նախասենյակով: Խցի երկարությունը 6.0 մ է, լայնությունը՝ 2.6 և ահռելի քարերից դրված պատերը թեքությամբ բարձրանում եւ փակվում են կեղծ թաղով 1.9 մ բարձրության վրա:

Համալիրի դիմացի՝ արևելյան հարթակին նայող ճակատին հուշարձանախումբը ունեցել է ցից կանգնած (օրտոստատ) քարերից շարված եզրային ցանկապատ, որի մի հատվածը պահպանվել է: Այստեղ է ընկած նաև 2.3 մ երկարությամբ սյուն-մենհիրը, որի վերնամասում փորված է խորը խորշ: Ակնհայտ է, որ մենհիրը ժամանակին

կանգնած է եղել և օգտագործնել ծիսական

արարողություններում:

Ամենայն հավանականությամբ հուշարձանախումբը եղել է բրոնզ-երկաթեդարյան սրբատեղի, հնարավոր է՝ (տոհմական) ‘պանթեոն’, ուր ինչ ինչ

ծիսական արարողակարգից հետո հուղարկավորվում էին ժամանակի նշանավոր մարդիք:



Միրիկ 2

Բնակատեղին գտնվում է Միրիկ և Հերիկ գյուղերի միջև սփռվող ընդարձակ սարահարթի արևելյան եզրին, Աղահեճ (Միրիկ 1) ամրոցից 1,8 կմ հարավ-արևմուտք: Այն տեղակայված է արոտավայրերի բաց դաշտի եզրի բնականից անպաշտպան փոքր բարձունքին: Բնակատեղին հատակագծում էլիպսաձև և պաշտպանված է երկու ներգծված պարսպաշարերով: Արտաքին պարսպի երկայնական տրամագիծը 200 մ է, ընդլայնակամը՝ 120 մ և շարված է երկշերտ, միջին ու մեծ անմշակ քարերից առանց շաղախի:

Ներսի կլորացող պարսպաշարով փակվող տարածքը խիտ կառուցապատված է ուղղանկյուն ու կորագիծ կառույցներով, որոնց մեջ նկատվում են նաև փողոցներ, ներքին բակեր, առանձին կացարաններ հիշեցնող փոքր սենյակներ: Սենյակների պատաշարերի մեջ և ներսում դրված են կուռք հիշեցնող ցից կանգնած քարեր: Արտաքին պարսպապատը ներառնում է նաև անասնափարախների նմանվող ընդարձակ ուղղանկյուն ու կլորացող քարե ցանկապատեր: Ներսի կառույցների պատերը դրված են միջին չափի քարերեից և պապիպանվել են մեկ-երկու քարի բարձրությամբ: Ամրացված բնակատեղիի ներսում աչքի են ընկանում 3-4, այսպես կոչված, «օղուզի տներ» հիշեցնող շինություններ: Վերջիններս ուղղանկյուն, մոտ 2,5 X5,0 մ չափերով, մեծ ու ճեղքած քարերից շարված կիսագետնափոր սենյակներ են (թաղումնային խցեր), ուր նկատվում են կեղծ թաղի ծածկերի հետքեր: Ամենայն հավանականությամբ, դրանք ավելի հին դամբարանների թաղումնային խցեր են, որոնք հնում կողոպտվել և օգտագործվել են որպես կացարան: Բնակատեղիի հյուսիսային մասում երևում է նաև կատակոմբային թաղում հիշեցնող գետնափոր կիսաբաց խորշ:

Ամրացված բնակատեղիին հարող շրջակա ընդարձակ դաշտերը հերկված են: Միայն հյուսիսային կողմում պահպանվել են կիկլոպյան շարվածքով միաշերտ պատերով ներփակ ընդարձակ տարածքներ, հավանաբար, բնակավայրից դուրս դրված անասնափարախներ:

Հուշարձանը բազմաշերտ է: Նախապես կարելի է տարազատել առնվազն 2-3 շինարարական շերտ, որոնք արտահայտվում են միմյանց վրայով անցնող և շինտեխնիկայի որոշ տարբերություն ունեցող պատերով ու կառույցներով: Հայտնաբերված վերգետնյա խեցեղենը բազմազան է և թվագրվում է՝ Ք.ա. 4-1 հզ., որոնց մեջ կարող են լինել նաև կողոպտված դամբարաններից հանված նյութեր:

Հուշարձանի տեղադրությունը բնականից անպաշտպան, հարթ դաշտում, համեմատաբար թույլ պաշտպանական համակարգը, անբարենպաստ ջրագրությունը և ընդարձակ փարախների առկայությունը ենթադրել է տալիս, որ բնակատեղին եղել է ժամանակավոր բնակության վայր, որը պարբերաբար վերակառուցվելով ու ընդլայնվելով օգտագործվել է որպես անասնապահական ամառանոցի կայան:

Բնակատեղիից 2,0 կմ հվ-արմ, գետահովտից դեպի ալպյան մարգագետինները եկող ճանապարհի սկզբնամասում հայտնաբերվել է ժայռապատկեր: Մերկացող բնական ժայռի մակերեսին փորագրված առվակները, կոնցենտրիկ օղակները, փոսորակներն ու հարթակներն, ամենայն հավանականությամբ, տեղանքի սխեմատիկ քարտեզն է, ուր պատկերված են հնագույն ճանապարհներն, անասնափարախներն ու կայանները, լճակներն ու աղբյուրները:

Նորաբերդ

Նորաբերդը Քաշաթաղի շրջանի ամենահայտնի ու նշանավոր ամրոցն է: Այն գտնվում է պատմական Քաշաթաղ գավառում և որոշ մասնագետների կողմից նույնացվում է համանուն ամրոցի հետ:

Ամրոցը տեղակայված է Հոչանց գետի անդնդախոր կիրճի ձախ՝ արևմտահայաց ափի զառիթափի միջնամասում վեր խոյացող եռանկյունաձև բարձր հրվանդանին և զբաղեցնում է 0,16 հա. տարածք: Ամրոցանիստ հրվանդանը երկու կողմերից եզերվում է ուղղահայաց կտրվող ժայռաձերպերով և, գործնականում, անմատչելի է: Միայն հարավային՝ գետահայաց կողմից ունի մոտեցում խիստ թեքադիր լանջով: Ամրոցը հատակագծում եռանկյունի է, ուր հյուսիսային, ամենաբարձր գագաթին տեղակայված է մոտ 8-10 մ տրամագծով կլորավուն աշտարակ-դիտակետը: Գանձախույզների փորված խրամատում երևում են նրա հարավային պարսպապատի հիմքերը:

Ամրոցը արևելյան ու արևմտյան կողմերից անմատչելի է, ուստի և պարիսպներ չունի և միայն հարավային կողմից է պաշտպանված երկու շարք հզոր պարսպապատերով: Արտաքին՝ հիմնական պարիսպը 68 մ երկարությամբ գրեթե ուղղաձիգ հետագծով միացնում է արևելյան և արևմտյան ուղղահայաց իջնող ժայռաձերպերը: Այն կառուցված է ճեղքած, խորանարդի բերված մեծ, անմշակ քարերից, ամրացված կրաշաղախով: Պարսպից պահպանվել է մինչև 6,0 մ բարձրությունը: Արտաքին պարիսպը ուժեղացված է 4 տարբեր չափերի ուղղանկյուն որմնահեծերով, որոնցից կենտրոնականի չափերն են 3,0 X 3,5 մ: Չի բացառվում, որ այս և մյուս որմնահեծերը վերևում պսակվում էին սնամեջ աշտարակներով:

Հիմնական պարսպին զուգահեռ, 16-20 մ վերև, գնում է երկրորդ պարասպագիծը: Այն կառուցված է նույն շինտեխնիկայով, ուղղաձիգ է, որմնահեծեր չունի և բաժանում է ամրոցի ներսի տարածքը երկու տարբեր մակարդակներին նստած անհավասար դարավանդների: Երկու դարավանդների պարսպամերձ հատվածներում նկատվում են կառուցապատման հետքեր: Երկու պարիսպներից էլ երևում են միայն արտաքին ճակատները և ակնհայտ է, որ նրանք բացի պաշտպանականից, ունեցել են նաև տարածքը լայնացնող ու հարթեցնող հենապատերի գործառույթ:

Ամրոցի գլխավոր մուտքի տեղն ու կառուցվածքը չի պահպանվել, բայց դատելով տեղանքից, այն պետք է որ լիներ հիմնական պարսպի ծայր հարավ-արևելյան անկյունում: Արևելյան անկլունում էր նաև երկրորդ պարսպի

մուտքը, ուր այսօր բացվում է ազատ անցումը:

Ամրոցի և պարասպապատերից դուրս որևէ շունության հետքեր չէն նկատվում: Վերգետնյա նյութը սակավ է, բայց զանձախույզների փորած փոսից և խուզահորից հայտնաբերված խեցեղենը հուշարձանը թվագրում է 11-14 րդ դդ.: Չի բացառվում, որ ամրոցը գալիս է ավելի վաղ շրջանից, բայց այսօր դրա ապացույցները մենք չունենք:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՄՐՈՑՆԵՐԸ



Քարվաճառ 1

Գտնվում է Քարվաճառ քաղաքի ժայռային հրվանդանի ծայր հյուսիս-արևելյան եզրին, Թարթառ գետին իր ձախակողմյան՝ Քարվաճառ վտակի միախառնման կետում բարձրացող բազալտե ժայռաբազկին: Ամրոցը զբաղեցնում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ձգվող հրվանդանի ծայրամասի եռանկյունաձև, նեղ ու երկար հարթ մակերեսը: Հրվանդանի ամրոցանիստ հատվածը անջատված է Քարվաճառի քաղաքանիստ մասից ձեռակերտ փորված լայն խանդակով: Ամրոցանիստ հատվածի երկարությունը 270 մ է, ամենամեծ լայնությունը՝ 60 մ, բարձրությունը Թարթառի մակարդակից՝ մոտ 80 մ: Ամրոցի հարավով անցնում է Դրմբոն-Ջերմաջուր ավտոմայրուղին, հյուսիսից՝ նույն մայրուղուց Քարվաճառ քաղաք մտնող ավտոճանապարհը:

Ամրոցը, հրվանդանի մակերեսի ամբողջ պարագծով, ամրացված է պարսպով, որի ուրվագիծը հստակ երևում է հարթության եզրագծերում: Պարիսպը դրված է միջին չափի ճեղքած, անմշակ քաերից չոր շարվածքով, լայնությամբ երկշերտ և պահպանվել է մեկ-երկու քարի բարձրությամբ: Ամենամատչելի հարավ-արևմտյան կողմից ամրոցը, բացի խանդակից, պաշտպանված է նաև երկու, միմյանց զուգահեռ գնացող հզոր պարիսպներով: Այս երկու, հիմնական պարիսպները շարված են զգալիորեն ավելի մեծ քարերից, նույն՝ կիկլոպյան շարվածքով: Նրանք, ամենայն հավանականությամբ, եղել են ավելի բարձր, քանի որ փլատակները ուրվագծվում են որպես երկու երկարաձիգ, ձորից ձոր գնացող, զուգահեռ քարահողային թմբեր:

Հուշարձանը վատ է պահպանվել: Մինչ ազատագրումը տեղի գառնարած բնակչությունը ամրոցի տարածքը օգտագործում էր որպես անասնափարախ: Մակերեսից հավաքված հնագույն պատերի քարերից ամրոցի ներսում շարվել են երեք մեծ ուղղանկյուն անասնափարախների ցանկապատեր: Ուշագրավ է, որ անասնափարախների արևմտյան երկու քարե ցանկապատերը դրվել են ամրոցի հիմնական պարիսպների քարհողային թնբերի վրա:

Ամրոցի պաշտպանական համակարգի կարևորագույն բաղադրիչն է խանդակը: Այն դրված է հրվանդանի ամենանանեղ՝ մոտ 35 մ լայնությամբ հատվածում և ունի մոտ 10 մ խորություն: Ամրոցի ներսի տարածքը հարթ է, քարերից մաքրված: Մակերեսին տեղ տեղ նկատվում են երբեմնի կառուցապատումից մնացած առանձին պատերի հիմնաքարեր: Միայն անասնափարախներից դուրս մնացած ամրոցի ծայր հյուսիս-արևելյան վերջավորությունում պահպանվել են մի ուղղանկյուն կառույցի հիմնապատերը: Հուշարձանում վերգետնյա խեցեվենը խիստ սակավ է: Դատելով կառույցների շինտեխնիկայից ամրոցը, մոտավոր, կարելի է թվագրել հետուրարատականից մինչև վաղ միջնադար ընկած

ժամանակահատվածներով:

Ծար 1

Գտնվում է պատմական Ծար ավանի բազալտե ընդարձակ ժայռային հրվանդանի ծայր հյուսիս-արևմտյան եզրին՝ Թարթառին Ծար գետակի միախառնման կետում բարձրացող եռանկյունաձև տափարակին: Փոքր պահակային ամրոց է, որը անջատված է Ծարի հիմնական հրվանդանից 5 մ խորությամբ փորված խանդակով: Ամրոց կարելի է մտնել միայն խանդակի արտաքին ճակատի հարավային կողմում պահպանված քարաշեն աստիճաններով, որոնք տանում են դեպի ամրոցի արտաքին պարսպի հարավային կետում ուրվագծվող մուտքը: Ամրոցի ընդհանուր երկարությունը 120 մ է, ամենամեծ լայնությունը՝ 42 մ: Հարավ-արևելյան եզրին մոտ 20 մ վեր խոյացող ժայռային զանգվածի կլորացող հարթակին եղել է ամրոցի դիտակետը, որտեղից ուղղիղ տեսողական կապով վերահսկվել է Թարթառի կիրճի մոտ 5 կմ երկարությամբ հատված: Բուն ամրոցը տարածվում է դիտակետի հյուսիս-արևմտյան ստորոտի նեղ ու երկար, ձեռակերտ հարթեցված հրապարակում և պարագծով պարսպապատ է: Պարսպապատի ներսում, ծայր հյուսիսային կետում պահպանվել են մոտ 7 x 10 մ չափերով մի ուղղանկյուն սենյակի հիմնաքարերը, իսկ կենտրոնում ուրվագծվում է մի մեծ շինություն: Առանձին շինությունների հետքեր նկատվում են դիտակետի հյուսիսային ու հարավային ստորոտներում: Հուշարձանի ճարտարապետական մանրամասները վատ են պահպանվել՝ հիմնականում ծածկված են հողով և երևում են հատվածաբար: Պատերն ու պարիսպները կառուցված են միջին չափի ճեղքած, անմշակ քարերից՝ երկշերտ, կավահողային կապակցումով:

Դատելով պատերի ու պարիսպների կառուցվածքից և սակավ վերգետնյա խեցեղենից՝ հուշարձանը կարելի է նախնական թվագրել ուշ անտիկ – վաղ միջնադարի ժամանակաշրջաններով:

Վայունիք

Գտնվում է Ծար ավանից 1,7 կմ հարավ, Սևխաչ (Կարախաչ) գետի խոր կիրճի հանդիպակաց ափին, ներկայումս չբնակեցված նախկին Զիվել գյուղից հյուսիս-արևելք:

Մոտ 30,0 հա տարածությամբ մեծ ու ընդարձակ քաղաքատեղին զբաղեցնում է Թարթառ ու Սևխաչ գետերի միախառնման կետի մոտ 800 մ բարձրացող միջանկյալ եռանկյունաձև լեռնաբազկի հարթ մակերեսը: Հուշարձանախմբի երկարությունը 1220 մ է, առավել լայնությունը՝ 500 մ: Քաղաքատեղին նստած է ներկայումս հիմնահատակ ավերված հռչակավոր Գետամիջո վանքի վերևի սարահարթին: Եռանկյունաձև հրվանդանի հարավային, կետում գտնվում է միջնաբերդը: Այն նստած է հրվանդանի մակարդակից 3-4 մ բարձր հարթակին և ունի երկու ուղղիղ անկյուններով, 120 մ x 70 մ չափերով կանոնավոր սեղանաձև հատակագիծ: Այն չորս կողմերից պաշտպանված է ուղղաձիգ պարիսպներով, որոնք անկյուններում ու հյուսիսային ճակատին ամրացված են ուղղանկյուն աշտարակներով: Միջնաբերդի թեքադիր մուտքը եղել է հյուսիս-արևելյան անկյունում և խորհրդային տարիներին քանդվել, լայնացվել է տրակտորով: Ներսի տարածքը հարթ է, խատածածկ և մինչև ազատագրումը հերկվել է: Միջնաբերդի ներսում կառուցապատման հետքեր չեն երևում, իսկ պարիսպները հիմնականում ուրվագծվում են քարահողային թմբերի տեսքով:

Բուն քաղաքատեղին տարածվում է միջնաբերից հյուսիս ընկած ընդարձակ սարահարթում: Քաղաքատեղիի տարածքը ժամանակին ևս հերկվել է և շինությունների հետքեր գրեթե չեն պահպանվել: Նկատելի է, որ քաղաքատեղիի ընդարձակումը դեպի հյուսիս կազմակերպված է եղել իրար հաջորդող 6-7 արհեստական դարավանդների տեսքով: Քաղաքատեղիի տարածքը միջնաբերդով հանդերձ վերցված է մոտ 3,0 կմ ընդհանուր երկարությամբ պարիսպների մեջ: Պարիսպները գնում են հրվանդանի եզրագծերով և համատարած չեն՝ նրանց հետագիծը պայմանավորված է տեղանքով: Պարիսպները փակում են հրվանդանի լանջերից վեր բարձրացող բոլոր հնարավոր ուղիները: Այն կետերում, ուր վերընթացը դյուրին է, դրված են կրկնապարիսպներ, իսկ անմատչելի

ուղղահայած կտրվող ժայռագծերը պարսպապատված չեն: Քաղաքատեղիի

բոլոր պարիսպները շարված են մոտավոր խորանարդի բերված ճեղքած բազալտից, լայնությամբ երկշերտ, մեջը լցված մանր քարեր՝ կավային կապակցումով: Կրաշաղախի հետքեր չեն երևում:

Հուշարձանախմբի հիմնական ճանապարհի հետագիծը հստակ նկատվում է: Այն թեքությամբ բարձրանում է Սևխաչի ձորից և մտնում քաղաքատեղի նրա ամենալայն կետում: Ճանապարհը ունի քարաշեն հենապատեր և մասամբ ժայռափոր է: Վերընթացի միջնամասում, բարձր ժայռի տակ, ըստ ամենայնի, եղել է մուտք-անցակետ: Այստեղ հզոր հենապատերով կազմակերպված է լայն հրապարակ, որը հնարավոր է, փակված էր կամարակապ դարպասով:

Հուշարձանում վերգետնյա խեցեղեն չի հանդիպում, բայց դատելով պարիսպների շինտեխնիկայից քաղաքատեղին, նախնական, կարելի է թվագրել անտիկից վաղ միջնադար

ընկած ժամանակաշրջաններով՝ մոտավորապես 2-9 րդ դդ:

Հանդաբերդ

Հայոց Արևելից Կողմանց ամենանշանավոր ու ամրակուռ ամրոցներից մեկն է: Կառուցված լինելով լայն տեսադաշտ ունեցող լեռան գագաթին, այն հսկել է Դվին-Պարտավ պատմական ճանապարհի Լև գետի հովտով անցնող մի զգալի հատվածը: Ամրոցի կառուցումը (վերակառուցումը) վերագրվում է 9-րդ դարում Արցախի հյուսիսային գավառների իշխանաց իշխան, Հայաստանի, Վիրքի և Աղվանքի պատրիկ Սահլ Սմբատյանի որդի՝ Ատրներսեհին:

Ամրոցը տեղակայված է Լև գետի աջ ափին վեր խոյացող բարձր լեռան գագաթին: Այն բարձր է հյուսիս-արևելյան ստորոտում գտնվող Քնարավան գյուղից 200 մ, իսկ գետի մակարդակից՝ 240 մ: Ամրոցը զբաղեցնում է լեռան գագաթի մի փոքր թեքություն ունեցող՝ մոտ 100 x 45 մ չափերով հրապարակը և ամրողջ պարագծով ամրացված է պարիսպներով: Պարիսպները պահպանվել են մինչև 8,0 մ բարձրությունը, կառուցված են տեղի ճեղքած, անմշակ քարերից, կրաշաղախով, և ուժեղացված են դեպի դուրս կլորացող, սնամեջ աշտարակներով ու կորագիծ աշտարակատիպ ելուստներով: Ամրոցը բաղկացած է երկու հատվածներից: Ամենաբարձր կետում տեղակայված է ոչ մեծ, տձև եռանկյունի հատակագծով հին (հնարավոր է 7-8 րդ դդ) ամրոցը, որին հետագայում (ամենայն հավանականությամբ հենց Ատրներսեհի կողմից) կցվել է լեռան ամրողջ գագաթնագիծը ներփակող մեծ ամրոցի պարիսպը: Վերակառուցված ամրոցում հին հատվածը դարձել է միջնաբերդ՝ դղյակ: Ներսում նկատվում են որոշ պատերի հիմնամասեր, բայց ամբողջական շինություններից պահպանվել է միայն ուղղանկյուն քարաշեն ջրամբարը: Ամենայն հավանականությամբ, դղյակի և ամրոցի ներսի կառույցները հիմնականում եղել են փայտաշեն: Պարիսպների տակ և կենտրոնի ժայռի մեջ՝ նկատվում են մինչև 5,0 մ խորությամբ պահպանված, 5-6 ջրամեկուսիչ կրաշաղախով սվաղված շտեմարան-հորեր:

Ամրոցը անմատչելի է, և այնտեղ կարելի է մուտք գործել միայն լեռան արևմտյան կողմով անցկացրած ժայռափոր ճանապարհով: Ճանապարհը միջնամասում հանդիպում է ամրոցի հյուսիս-արևմտյան անկյունից խիստ թեքադիր լանջով կտրուկ իջնող պարասպագծին: Վերջինս, ժամանակին ճանապարհի հետ հատման կետում ունեցել է կամարակապ դարպաս, որի վրայով անցնելով իջել ներքև՝ մինչև ուղղահայաց ժայռերը : Պարսպագծի ներքևի հատվածից պահպանվել է հիմնաշարը: Կործանված դարպասի ներսում՝ ժայռի մեջ, փորված է դռնապահի սենյակ հիշեցնող մի կիսաշրջան խորշ:

Ճանապարհը գալիս է մինչև հյուսիսային պարսպի երկու իրար կողք կանգնած բոլորակ աշտարակների միջնամասում գտնվող ամրոցի գլխավոր մուտքը: Գլխավոր մուտքը կազմակերպված է որպես կամարակապ դարպաս, իսկ նրա կողքին՝ մեծ աշտարակի մյուս կողմում, գտնվում է այսպես կոչված «կեղծ մուտքը», որը, հավանաբար, ունեցել է տեխնիկական նշանակություն:

Հուշարձանում վերգետնյա խեցեղեն չի հանդիպում, բայց դատելով շինտեխնիկայից՝ ամրոցը կարելի է թվագրել 7-15 րդ դդ:

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՄՐՈՑՆԵՐԸ


Մեծ Թաղեր Ագին
Դրախտիկ
Տումի
Տող
Հոդեր
Ջրաբերդ
Ջրաբերդ
Ծիծեռնավանք
Մարիաղանոր
Ղլուդաբաղ
Ուկնանոր
Հադրութ
Ագնեստան
Նորաշեն
Ծամոր
Տոր
Տյուք
Վանք
Սարինշեն
Թարգամանոր
Վարդաշեն
Հակակու
Թաղուտ
Մոխրենես
Ամրոցաշեն
Ակնաղբյուր
Ծաղկավանք
Կարմրակուռ
Պլեթանց
Մելիքաշեն
Ղարդաբազար
Հորադիզ
Ոռդրի Մարջան
Մեծ Մարջան
Իշխանաձոր
Թաղ
Կանաչուտ
Ուռուտ
Ուռուտ
Ուռ

Սարիկ

Գտնվում է Հաղրութի շրջանի Հայկական (Սիրիկ, Սարիկ) գյուղից արևմուտք, գետակի հոսանքով վեր 2,1 կմ, գետի ձախ ափին վեր խոյացող հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող սրածայր լեռնաշղթայի ամենաբարձր կետում: Ամրոցը տեղակայված է խիստ դժվարամատչելի վայրում, գետի ակարդակից 140 մ բարձր նիշին: Նստվածքային ապարներից կազմված լեռնաշղթան պսակվում է սրածայր ցից ժայռերով, որոնց միջև ընկած մի նեղ, ժայռոտ տարածքում տեղակայվել է ամրակառույցը: Ամրոցը պահպանվել է երկու, խիստ ավերված հատվածներով: Կենտրոնական՝ ստորին հատվածում կանգուն է մնացել ամրոցի ճակատային պարիսպը իր ամբողջ՝ 35,0 մ երկարությամբ: Այն, գրեթե ուղղաձիգ գնում է հյուսիս-սրևմուտք հարավ-արևելք ուղղությամբ, եզրերում ու միջնամասում տեղադրված երեք, ծավալից դուրս եկող կիցաբոլորակ քարուկիր աշտարակներով: Կենտրանական աշտարակը բաժանանում է ճակատային պարիսպը երկու հավասար մասերի: Հյուսիսասյին մասում նկատվում է ամրոցի մոտ 2,0մ լայնությամբ գլխավոր մուտքի կամարակապ բացվածքը, որը ներկայումս փակված է անկանոն պատաշարով: Պարսպի ներսում, մուտքը բացվում է մի ուղղանկյուն սենյակի մեջ, իսկ հարավային կողմի փլատակներում երևում է մի այլ սենյակի պատերի մնացորդներ: Ճակատային պարսպի հյուսիսային անկյունային աշտարակը կից է ուղղահայաց, պատանման ժայռին, որը, ամենայն հավանականությամբ պարսպի դեր էր կատարում: Հարավային կողմում անկյունային աշտարակից թեքվող պարսպից և շինություններից ոչինչ չի մնացել, քանի որ տեղից պոկվել, կործանվել են պարսպի տակի ժայռային զանգվածները:

Երկրորդ բարձրադիր հատվածի շինությունները նատած են կենտրոնական՝ հատվածի պարսպի հյուսիսային աշտարակից մոտ 50,0 մ հեռավորության վրա և 3-4 մ ավելի բարձր նիշով գնացող նեղ ու երկար ծայռային ելուստին: Այստեղ, հարավահայաց եզրի ամենաբարձր կետում կանգնած է մի մեծ, հզոր հենապատով ամրացված կլոր, բարձր աշտարակ-դիտակետ: Ժայռագծի հյուսիսային ճակատին պահպանվել են ամրապարսպի հետքերը երկու կիսաբոլորակ աշտարակներով, իսկ հարավահայաց կողմում երևում է ուղղանկյուն, քարուկիր ջրավազանի հատվածը և երբեմնի պարսպի պատառիկ: Ամենայն հավանականությամբ այս երկու հատվածները ժամանակին ներառնված են եղել մի ընդհանուր պարսպագծի մեջ, բայց հետագայում, բնական էրոզիային հետևանքով ժայռազանգվածները թափվել

են, իրենց հետ տանելով ձեռակերտ կառույցները:

Ամրոցի բոլոր շինությունները կառուցված են միջին չափի տեղի ճեղքած, անմշակ կրաքարից կրաշաղախով և արտաքուստ սվաղված են եղել: Ամրոցի պահպանված շինությունների ընդհանուր երկարությունը 150,0 մ է, ամենամեծ լայնությունը՝ 35,0 մ:

Հուշարձանում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, բայց դատելով շինությունների ճարտարապետական առանձնահատկություններից ամրոցի կարելի է մոտավոր թվագրել 9-14 րդ դդ:

Թովմասաբերդ

Գտնվում է Վերին Թովմաս գյուղից 1,7 կմ հյուսիս-արևելք, Թովմասագետի /Ինչաչայ/ աջ ափի եռանկյունաձև հրվանդանի ծայր հարավային վերջավորությունում: Հրվանդանը գտնվում է Թովմասասարի լեռնազանգվածի հարավային ստորոտում և ի շնորհիվ իր բարձր տեղադրության, գերիշխող դիրք է գրավում շրջապատի նկատմամբ: Այն ուղղիղ տեսադաշտ ունի դեպի հարավ տարածվող ընդարձակ դաշտերը և Արաքսի հովիտը: Ամրոցը հատակագծում եռանկյունի է: Այն երկու կողմերից եզրագծվում է ուղղահայաց կտրվող անմատչելի ժայռածերպերով և միայն հյուսիսային կողմից է պաշտպանված կորագծով գնացող ձեռակերտ պարսպով:

Պարսպի երկարությունը 62 մ է, պահպանված բարձրությունը՝ 1,0 մ: Երկշերտ պարիսպի լայնությունը 1,5-2,0 մ է, շարված է մեծ և միջին չափի ճեղքած, անմշակ, տեղի կրաքարից՝ առանց շաղախի: Պարսպի ճակատային քարաշարերի միջնամասը լցված է քարահողային բուտով: Պարսպի երկու ճակատները պատված են փլատակներով: Ամրոցի ներսում մերկանում է հրվանդանի ժայռային մակերեսը և որևէ շինության, պատաշարի և նույնիսկ առանձին շինաքարերիի հետքեր չկան: Պետք է ենթադրել, որ ամրոցի բնակելի կառույցները եղել են փայտաշեն: Շինությունների հետքեր չկան նաև պարսպից դուրս ընկած տարածքում, ուր հանդիպում են նախաքրիստենեական թաղումներին բնորոշ դամբարանաբլուրներ: Դամբարանները տարածվում են նաև ամրոցի շրջակա սարահարթերում, ուր նկատվում են նաև դամբարանաբլուրների խմբեր: Ամրոցի ներսում ու դրսում հողաշերտի ծածկույթը բացակայում է, ուստի չկա նաև մշակութային շերտ և վերգետնյա խեցեղեն: Փաստորեն ամրոցից մնացել է միայն մի պարսպագիծ:

Նման պարագայում ամրոցի թվագրումը կարող է լինել խիստ մոտավոր, և դատելով պարսպի շինտեխնիկայից, այն կարելի է վերագրել ուշ անտիկ - վաղ միջնադարին, այն է՝ 3 – 7 րդ դդ:

Ներքին Թովմաս գյուղի հարավային եզրին կանգուն է մահմեդական դամբարան-գյումբազ (կորդինատներն են՝ N. 39 22 15,6 E. 46 45 46,7 Alt. 779): Աշտարակատիպ, երկհարկանի դամբարանը հատակագծում շրջանաձև է, կառուցված սրբատաշ կրաքարից կրաշաղախով: Կանգնած է 5,0 մ բարձրությամբ արհեստական, կոնաձև հողաթմբի գագաթին: Առաջին հարկը՝ տորգետնյա թաղումնային խուցն է: Այն

հատակագծում հավասարաթև խաչաձև է, միակ մուտքը արևմուտքից է: Թաղումնային խուցը ծածկված է եղել ներկայումս կործանված 1/3 գմբեթարդով: Երկրորդ հարկը գլանաձև է՝ մուտքը հյուսիսից: Երկրորդ հարկի ծածկի գմբեթարդը բացակայում է: Դամբարանի բարձրությունը 12.0 մ է , տրամագիծը 5.0 մ: Համարվում է 13-14 րդ դդ կառույց:

Հուշարձանը ակնհայտորեն կառուցվել է հայ վարպետների ձեռքով, ինչի մասին է վկայում պատերին թողնված վարպետների նշանների մեջ հանդիպող ոճավորված խաչապատկերը:

ՇԱՀԱՐՋԻԿ

Գտնվում է Հադրութի շրջանի Արևշատ /Դոլոնլար/ գյուղից 2,0 կմ հվ-աե, նախկին Շիխլար գյուղի արևմտյան կողմում: Հուշարձանը զբաղեցնում է Դոլանլար գետի և նրա հյուսիսային վտակի խոր կիրճերով կազմավորված՝ հյուսիս-արեմուտքից հարավ-արևելք ձգվող, նեղ ու երկար հրվանդանի 780 մ. երկարությամբ և առավելագույնը 170 մ լայնությամբ համեմատաբար հարթ, դեպի հարավ սահուն իջնող մակերեսը: Հուշարձանի վերին ու ստորին եզրակետերի բարձրության նիշերի տատանումը 45,0 մ է: Քաղաքատեղին իր 5,8 հա. տարածքի ամբողջ պարագծով ամրացված է եղել 1,8 կմ ընդհանուր երկարությամբ պարսպատերով: Քաղաքատեղին ներփակող պարսպի հետագծը ուրվագծվում է քարաշար հիմքերով: Երկայնական առանցքով քաղաքատեղին բաժանված է հինգ անհավասար թաղամասերի: Վերջիններս անջատվում են միմյանցից հստակ նկատվող կորագիծ, քարաշար հաստ պարասպապատերով:

Ամենամեծը և ամենալայնը կենտրոնական թաղամասն է, որը, ամենայն հավանականությամբ, եղել է միջնաբերդը: Նրա կենտրոնում նկատվում է մեծ՝ 40 x 80 մ չափերով, հատակագծում ուղղանկյան շինություն, որին կցված են նաև այլ, վատ ուրվագծվող ծավալներ: Դեպի «կենտրոնական շինության» է գալիս քաղաքատեղիի գլխավոր, ճանապարհը: Այն սկիզբ է առնում հրվանդանի հարավ-արևելյան վերջավորությունից՝ Դոլանլար գետի վրա կառուցված փայտածածկ թռիչքով կամրջից (կորդինատներն են՝ N. 39 25 57,1 E. 46 51 50,1 Alt. 953),): Այս ճանապարհը գրեթե ուղղաձիգ գնում է մոտ 1100 մ հրվանդանի կենտրոնագծի ճիշտ ջրբաժանով, կտրում անցնում է քաղաքատեղիի ներքևի երկու թաղամասերը իրենց պարիսպներով և գալիս միանում է միջնաբերդիկենտրոնական շինությանը: Ճանապարհը իր ընթացքի վերնամասի մոտ 300 մ հատվածում և մասամբ նրանից ներքև՝ հստակ ուրվագծվում է որպես երկու կողմերից ցից քարաշարերով եզերված, մոտ 1,5-2,0 մ լայնությամբ ուղղիղ գիծ:

Քաղաքատեղին վատ է պահպանվել: Հետագայում տարածքը օգտագործվել է գյուղատնտեսության նպատակով, ինչի մասին են վկայում քարահավաքումների նորաստեղծ քարակույտերը: Հուշարձանի բոլոր հինգ թաղամասերում նկատվում են երբեմնի կառուցապատումից մնացած պատերի քարաշեն հիմնաշարերրի հատվածներ և տնատեղերից մնացած թեթև ուրվագծվող ուղղանկյուն

իջվածքներ: Բոլոր շինությունների քարաշեն հիմնաշարերը միջին չափի քարերից են, ըստ ամենայնի, կավահողային կապակցումով: Կրաշաղախի հետքեր չեն նկատվում: Քաղաքատեղին վերին ու ստորին եզրակետերում ունեցել է մուտք-դարպասներ: Վերջիններիս բացվածքները ունեցել են ուրույն, հատակագծում Г-անման կառուցվածք, որի մեծ եզրաքարերը պապանվել են տեղում:

Հատկանշական է, որ բոլոր պատերն ու պարիսպները շարված են ոչ մեծ քարերից և շուրջը փլվածքներ չունեն: Այսինքն քարերով շարված են եղել միայն պատերի հիմքերը և քարաշարը բարձր չի եղել: Ի նկատի ունենալով այն փաստը, որ քաղաքատեղիի տարածքը պատված է մշակութային շերտերը ծածկող հաստ հողաշերտով, կարելի է ընդունել որ հուշարձանի բոլոր շինությունները կառուցված են եղել քարե հիմքի վրա դրված հում աղյուսից: Հողաշեն պատերը ժամանակի ընթացքում քայքայվել, լվացվել են մերկացնելով քարաշեն հիմքերը և բարձրացնելով տարածքի հողածածկույթի շերտը: Այս է պատճառը, որ հնավայրում ի սպառ բացակայում է վերգետնյա խեցեղենը, ինչը դժվարեցնում է հուշարձանի թվագրությունը:

Այսօր, խիստ մոտավոր, հուշարձանը կարելի է թվագրել 7-16 րդ դդ.

ՔԱՇԱԹԱՂԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՄՐՈՑՆԵՐԸ


Ամրոց
Ղազանչի
Ամրոց
Ամրոց
Ամրոց

Քարոտան

Գտնվում է Արցախի Հնրապետության Քաշաթաղի շրջանի հարավային մասում, Քարոտան գյուղից հվ., Որոտան և Հակարի գետերի միջնամասում, նրանց միախառնման կետից 1,3 կմ հյուսիս, ոչ բարձր բլրաշղթայի ծայր հարավային առանձնացած բլրին: Ամրոցը զբաղեցնում է երկու գետերի մակարդակից մոտ 20,0 մ բարձրությամբ, հյուսիս-հարավ ձգվող բլրի էլիպսաձև, ձեռակերտ հարթեցված գագաթնամասը: Ամրոցը պաշտպանված է շրջապարսպով, որի ներփակ տարածքի առավելագույն երկարությունը՝ 107,0 մ, լայնությունը՝ 36,0 մ է, ինչը կազմում է 3680 քմ: Պարսպապատերի ընդհանուր երկարությունը 278 մ է: Պարիսպները կառուցված են միջին չափերի ճեղքած մոխրագույն ավազաքարից և գլաքարերից կապակցված ամուր կրաշաղախով: Այսօր գետնի մակերեսին երևում է միայն 1.5-2.2 մ լայնությամբ պարսպապատի հիմնամասերի ուրվագիծը: Նկատվում է, որ շրջապարիսպը ուժեղացված է եղել ոչ համաչափ դասավորված փոքր, ուղղանկյուն որմնահեծերով: Ամրոցի ներսի տարածքը հիմնականում հարթ է ու դատարկ: Կառուցապատման հետքեր նկատվում են միայն հարավային կողմում, այն էլ՝ հատվածաբար ուրվագծվող հիմնապատերի տեսքով:

Ուշագրավ է ամրոցի գլխավոր մուտքի կառուցվածքը: Այն գտվում է ծայր հարավային, գետերի խառնարանին նայող կետում և կազմակերպված է այնպես, որ մտնողը պետք է անցներ միմյանց նկատմամբ 90^0 -ի տակ բացվող երկու դարպասներով: Մտնողը արևելքից դիտարկվում էր հզոր աշտարակից, իսկ հարավից՝ նրա թիկունքին նայում էին ներփակ սենյակից: Գլխավոր մուտքի արևելյան աշտարակը մոտ 4.0 X 4.5 մ չափերով արտաքինից հնգանիստ զանգված է, որի պահպանված ստորին մասը միաձույլ է: Ամենայն հավանականությամբ նրա վերևի հատվածը ունեցել է սնամեջ ծավալ: Ճիշտ նմանատիպ աշտարակ դրված է նաև ամրոցի հարավ-արևմտյան անկյունում: Երկու աշտարակներից, բացի իրենց տեղում երևացող հիմնապատերից, պահպանվել են նաև ցոկոլային մասի 1.5-2.0 մ բարձրությամբ զանգվածները: Վերջիններս գլխիվայր ընկած են իրենց իսկ հիմքերի դիմաց: Պոկված, ընկած զանգվածների դիրքը ակնհայտորեն վկայում է, որ այս երկու աշտարակները ժամանակին պայթեցվել են: Ամրոցի կրաշաղախով կառուցված պարիսպների ավերածության աստիճանը թույլ է տալիս ենթադրելու, որ նրանց կործանման մեջ առկա է նաև մարդկային գործոնը:

Բլրի լանջերին կառուցապատման ցայտուն հետքեր չեն պահպանվել: Արևմտյան կողմում երևացող որոշ պատաշարերի բեկորներ կարելի է վերապահությամբ վերագրել երկրորդ՝ ստորին պարսպագծին: Ամրոցի արևելյան՝ Հակարիին նայող լանջին, հիմնական պարսպագծի տակ փորված պաշտպանական խրամատը, ըստ ամենայնի, 1992-1994 թթ. ազատագրական պատերազմից մնացած կնճիռ է: Հուշարձանի տարածքը հարուստ է վերգետնյա խեցեղենով, ուր զգալի մաս են կազմում ուռուցիկ եզրապատով ուղղանկյուն կղմինդրների և նրանց կիսախողովակաձև կափարիչների բեկորները: Ճարտարապետական մանրամասների և վերգետնյա խեցեղենի վերլուծության հիման վրա հուշարձանը թվագրվում է 14-18 րդ դարերով:

Ասկերանի շրջանի նորահայտ ամրոցները

Ցից սար

Գտնվում է պատմական Տիգրանակերտ քաղաքի հարավ-արևմտյան եզրին բարձրացող, նստվածքային ապարներից կազմավորված սրածայր լեռան վրա: Լեռան գագաթի նիշը բարձր է ստորոտում գտնվող Տիգրանակերտի բազիլիկ եկեղեցուց 100 մետրով: Ամրոցը զբաղեցնում է լեռան գագաթնագծի մոտ 140 մ երկարությամբ և առավելագույնը՝ 70 մ լայնությամբ, հս-հվ առանցքով ձգվող քարքարոտ մակերեսը: Ամրոցը վատ է պահպանվել և նրա պաշտպանական պարիսպագծի գրեթե բոլոր քարերը չեն երևում: Պարսպի պահպանված պատառիկները շարված են խոշոր,մոտավոր խորանարդի բերված, անմշակ քարերից առանց կրաշաղախի: Ամրոցի ներսի տարածքը խիստ հողմնահարված է և ամենուր մերկանում է ժայռային մակերեսը: Երբեմնի կառուցապատումից մնացել են առանձին պատերի աննշան հետքեր: Ամրոցի կենտրոնի ամենաբարձր կետում ուրվագծվում են ոչ մեծ, ուղղանկյուն աշտարակատիպ շինության փլատակները: 2019 թ. Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի կողմից ամրոցում կատարված հետախուզական պեղումների արդյունքում բացվել է ստորգետնյա սրբատաշ դամբարան: Պեղված դամբարանը և ամրոցը արշավախումբը թվագրում է վաղ միջնադարով:

Աղյուսակ

Հուշարձանի անվանումը	Անվանման Աղբյուրը	Այլ անվանում	Շրջան	Բնակավայր	Բնակավայրի նախկին անվանում	Աշխ. կոորդինատ	Բարձրություն	Դիրքը Բնակավայրից	Ջրագրություն	Տեսողական կապ
Արահուծ	մոտակա բնակավայրը	Մոլլար ղուզե	Քաշաթաղ	Արահուծ	Մալիբեյ	N. 39 37 14,9 E. 46 24 17,6	1346 մ	1,5 կմ ամ	Խնածախ գետակի աջ ափ	Ծիծեռնավանք, Սոնասար
Բարկուշատի բերդ	վերականգնված պատմական անվանումը	Դալա, Բերդ, Քուրդիկ	Քաշաթաղ	Դողար	Դավուդլու	N. 39 26 15,4 E. 46 26 50,1	790 մ	1,7 կմ աե	Որոտան /Բարկուշատ/ գետի աջ ափ	Անդոկաբերդ, Մազրա
Խոզնավարի լիճ	տեղանքի միկրոտեղանունը		Քաշաթաղ	Միրիկ	Միրիկ	39 37 54,5 N 46 19 13,8 E	2052 մ	6,8 կմ հվ	Խոզնավարի լճի հվ. ափին	
Կռապաշտի տներ	Միկրոտեղանվան թարգմանությունը	Գյավուր դամեր	Քաշաթաղ	Ծաղկաբերդ	Գյուլեբիրդ	39 31 36,4 N 46 32 43,5 E	892 մ	7,2 կմ հս-ամ	Կոռնիձոր գետակի ձախ ափ	
Միրիկ 2	մոտակա բնակավայրը	Միրիկ 2	Քաշաթաղ	Միրիկ	Միրիկ	39 40 54.6 N 46 18 30.7 E	853 մ	2,2 կմ	անջրդի արոտավայրում	Աղահեճ, Հերիկ, Սոնասար
Նորաբերդ	ԱՀ հուշարձանների կադաստր	Քաշաթաղ	Քաշաթաղ	Դրախտաձոր	Քաշաթաղ, Քարաբերդ Ղոշասու	39 44 04,4 N. 46 23 12,1 E.	1344 մ	4,9 կմ հվ-աե	Հաչանց գետի ձախ ափ	Ամրոց Սոնասար
Քարոտան	մոտակա բնակավայրը		Քաշաթաղ	Քարոտան	Քևդադիխ	39 12 56,4 N 46 43 15.5 E	836 մ	2.6 կմ հվ	Հակարի և Որոտան գետերի միախառնման կետ	
Քարվաճառ 1	մոտակա բնակավայրը		Շահուման	Քարվաճառ	Քյալբաջար	40 07 33,9 N 46 03 34,9 E	1458 մ	հս-աե եզր	Թարթառի ձախ ափ	
Ծար 1	մոտակա բնակավայրը		Շահուման	Ծար	Զառ	40 07 33,9 N 46 03 34,9 E	1458 մ	3,3 կմ հս-ամ	Թարթառ գետի ձախ ափ	
Վայունիք	Վերականգնված է պատմական		Շահուման	Զիվել	Զիվել	39 59 10.1 N 45 57 06.7 E	2160 մ	1,0 կմ հս-աե	Թարթառ և Սևխաչ	Ծար ավան, ամրոց Զիվել 2

	անվանումը								գետերի միջև	
Հանդաբերդ	Պտմական անվանումն է	Լևաբերդ, Լևոնաբերդ	Շահու մյան	Քնարավան		40 13 24,2 N 46 08 14,0 E	1639 մ	0,5 կմ հվ-ամ	Լև գետի աջ ափ	դիտակետ Պահակ
Թովմասա բերդ	մոտակա բնակավայրը		Հադրութ	Թովմաս	Դաղթումաս	39 23 53,7 N 46 47 01,9 E	1111 մ	1,7 կմ հս-աե	Թովմասագետի աջ ափ	
Սարիկ	մոտակա բնակավայը		Հադրութ	Հայկական	Սիրիկ, Սարիկ	39 29 10.6 N 46 51 09,5 E	1584 մ	2,1 կմ ամ	Սարիկ գետակի ձախ ափ	Բերդաքար
Շահարջիկ	Տեղանքի միկրոտեղանունը		Հադրութ	Արևշատ	Դոլանլար	N. 39 26 23,3 E. 46 51 26,3	1061 մ	2.3 կմ հվ-աե	Դիլանլար գետի ձախ ափ	
Ցից սար	միկրոտեղանունը	Չուլլուդաղ	Ասկե րան	Տիգրանակերտ	Շահբուլաղ	N. 40 03 29,2 E. 46 53 48,4	587 մ	1,5 կմ հվ-ամ	Շահ բուլաղ աղբյուրի մոտ	Տիգրանակերտ Նոր Մարաղա

‘

‘ ‘‘Արցախի ազատագրված տարածքների ամրոցների ուսումնասիրություն’’

ծրագրի ղեկավար Գ.Մ. Սարգսյան

01.10.0219





Արահուժ

Բաղադրամասերը պատեր, պարիսպներ, ճանապարհ

Թվագրությունը՝ (նախնական) անտիկ-վաղ միջնադար՝ 1-7 դդ

Հայտնաբերման տարեթիվը՝ . 2013 թ.





Ամրոց Խոզնավարի լիճ

Բաղադրամասերը՝	Ամրոց, դամբարանադաշտ
Թվագրությունը՝ (նախնական)	Ք.ա 2-1 հզ., միջնադար
Հայտնաբերման տարեթիվը՝	2018 թ.





Միրիկ

Բաղադրամասերը՝	Ամրոց, պարիսպ, դամբարանադաշտ
Թվագրությունը՝ (նախնական)	Ք.ա 3-1 հզ.



Ամրոց Քարվաճառ 1

Բաղադրամասերը	պարիսպներ, խանդակ
Թվագրությունը՝ (նախնական)	Ք.ա. 6 րդ դ - 7 րդ դդ
Հայտնաբերման տարեթիվը՝ .	2019 թ հուլիս

.





Ամրոց Թովմասաբերդ

Բաղադրամասերը	պարիսպ, դամբարաններ
Թվագրությունը՝ (նախնական)	3-9 րդ դդ
Հայտնաբերման տարեթիվը՝	2014 թ





Ամրոց Ծար 1

Բաղադրամասերը	պարիսպներ, խանդակ, դիտակետ
Թվագրությունը՝ (նախնական)	1 ից – 8-րդ դդ
Հայտնաբերման տարեթիվը՝ .	2019 թ





Քաղաքատեղի Վայունիք

Բաղադրամասերը	միջնաբերդ, պարիսպներ, ճանապարհ
Թվագրությունը՝ (նախնական)	2-9 դդ
Հայտնաբերման տարեթիվը՝	2019 թ. հունիս

Ամրոց Հանդաբերդ

Անվանման աղբյուրը	իր պատմական անվանումն է
Բաղադրամասերը	պարիսպներ, աշտարակներ, շտեմարաններ
Թվագրությունը՝ (նախնական)	7-15 րդ դդ





Ամրոց Սարիկ

Բաղադրամասերը	պարիսպ, աշտարակ, ջրավազան
Թվագրությունը՝ (նախնական)	9-14 րդ դդ
Հայտնաբերման տարեթիվը՝	2011 թ



Կռապաշտի տներ

Բաղադրամասերը՝ վերգետնյա կառույցներ, մենհիրներ
Թվագրությունը՝ (նախնական) Ք.ա 2-1 հզ
Հայտնաբերման տարեթիվը՝ 2014 թ.





Նորաբերդ

Բաղադրամասերը՝ պարսպապատեր, դղյակ

Թվագրությունը՝ (նախնական) 11-14 դդ դդ

Հայտնաբերման տարեթիվը՝ հայտնի էր խորհրդային տարիներից





Քարոտան

Բաղադրամասերը՝ պարսպապատ, աշտարակներ

Թվագրությունը՝ (նախնական) 14-18 րդ դդ

Հայտնաբերման տարեթիվը՝ 2018 թ.





Շահարջիկ

Բաղադրամասերը՝ բնակատեղի, ճանապարհ, կամուրջ
Թվագրությունը՝ (նախնական) 7-16րդ դդ
Հայտնաբերման տարեթիվը՝ 2019 թ. մարտ



Ցից սար

Բաղադրամասերը	ամրոց, դամբարան, աշտարակ
Թվագրությունը՝ (նախնական)	4-9 րդ դդ
Հայտնաբերման տարեթիվը՝	2018 թ.